Ð²Ú²êî²ÜÆ Ð²Üð²äºîàôÂÚ²Ü

Î²è²ì²ðàôÂÚ²Ü

Ì ð ² ¶ Æ ð

ԵՐԵՎԱՆ 2012

Ոչ պաշտոնական հրատարակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հունիսի 2012 թվականի N 730-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 74-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ո ւ մ է.**

Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրին՝ համաձայն հավելվածի, և այն ներկայացնել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2012 թ. հունիսի 19
Երևան

ՀՀ վարչապետ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ելույթը ՀՀ Ազգային ժողովում՝ ՀՀ կառավարության ծրագիրը ներկայացնելիս

20 հունիսի, 2012թ.

Ազգային ժողովի հարգարժան նախագահ,
Հարգելի պատգամավորներ,

Շնորհավորում եմ Ձեզ հինգերորդ գումարման Ազգային ժողովի պատգամավոր ընտրվելու կապակցությամբ և մաղթում արդյունավետ օրինաստեղծ աշխատանք:

Հավատում եմ, որ մեզ՝ յուրաքանչյուրիս, Ազգային ժողովի պատգամավորներին և կառավարության անդամներին, անկախ կուսակցական պատկանելությունից, միավորում է համազգային նպատակների իրականացման և հայրենիքի հզորացման ու բարգավաճման վեհ գաղափարը:

Այսօր կառավարությունը, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 74-րդ հոդվածի համաձայն, Ազգային ժողովի հավանությանն է ներկայացնում իր ծրագիրը:

Կառավարության ծրագիրը մշակվել է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության, Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի հանրապետական կուսակցության և «Օրինաց երկիր» կուսակցության նախընտրական ծրագրերի հիմնական դրույթներին համապատասխան՝ հաշվի առնելով նաև խորհրդարանական կուսակցությունների նախընտրական ծրագրերում ներկայացված՝ վերոնշյալ փաստաթղթերի հետ համադրելի գաղափարները:

Նախորդ ծրագրի իրականացման տարիները մեզ համար բարդ փորձությունների, մարտահրավերների ու ձեռքբերումների ժամանակաշրջան էին:

- Հայաստանի Հանրապետության Նախագահի գլխավորությամբ մենք կարողացանք էապես մեղմել ներքին քաղաքական պառակտվածության և անհանդուրժողականության դրսևորումները, որոնք, մասնավորապես, բացասական ազդեցություն էին թողնում ներդրումային և բիզնես միջավայրի վրա:
- Մեզ հաջողվեց երկրի բնականոն կյանքը զերծ պահել մեր հարևանությամբ ընթացող պատերազմական գործողություններով պայմանավորված ցնցումներից: Մասնավորապես, չնախատեսված լրացուցիչ ծախսեր իրականացրեցինք՝ ավելացնելով առաջին անհրաժեշտության ապրանքների քանակը և պետական ռեզերվների մակարդակը:
- Բանակաշինությամբ և արտաքին ակտիվ քաղաքականությամբ ապահովեցինք մեր երկրի անվտանգությունը՝ ամրապնդելով մեր կողմից պարտադրված խաղաղության երաշխիքները: Վերջին երեք տարիների ընթացքում հանրապետություն ներկրվեց և արտադրվեց նախկինից երկու անգամ ավելի սպառազինություն:
- Մեզ հաջողվեց մեղմել համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքները և ձևավորել ավելի դիվերսիֆիկացված տնտեսություն:
- Ճգնաժամի սուղ պայմաններում, երբ զարգացող շատ երկրներում կրճատվում էին աշխատավարձերը, թոշակները և նպաստները, մենք ոչ միայն կատարեցինք ստանձնած սոցիալական պարտավորությունները, այլև բարձրացրեցինք աշխատավարձերը, թոշակները և նպաստները, ինչը մեղմեց ճգնաժամի բացասական հետևանքները:

• Իրականացված հակաճգնաժամային ծրագրի ներքո մենք կարողացանք ներգրավել ֆինանսական միջոցներ և դրանք ուղղեցինք ենթակառուցվածքների արդիականացմանը, փոքր և միջին ձեռնարկությունների և համակարգաստեղծ ձեռնարկությունների վարկավորմանը՝ արդյունքում պահպանելով շուրջ 10 000 աշխատատեղ: Աղետի գոտում իրականացրեցինք լայնամասշտաբ շինարարական աշխատանքներ և 5000 անօթևան ընտանիք ապահովեցինք բնակարաններով:

• Մենք հեշտացրինք պետության կողմից անձանց մատուցվող բազմաթիվ ծառայությունների ստացումը՝ պետական համակարգի միջին և ցածր օղակներում զգալի կրճատելով շփումները քաղաքացիների հետ, ինչի արդյունքում էապես նվազեցին կոռուպցիոն դրսևորումները:

Այս և բազմաթիվ այլ արդյունքների ձեռքբերման մեջ էական են Ազգային ժողովի, քաղաքացիական հասարակության և մեր քաղաքացիների ջանքերը:

Միևնույն ժամանակ, մենք հստակ գիտակցում ենք նաև մեզանում առկա հիմնախնդիրները: Մենք մշտապես եղել ենք բաց և թափանցիկ, ընդունել ենք արդարացի քննադատությունը, ինքներս ենք բացահայտել շատ խնդիրներ:

• Որակյալ աշխատատեղերի սակավությունը, արտագաղթը և աղքատությունը շարունակում են մնալ առաջնային լուծում պահանջող խնդիրներ:

• Մեզ դեռևս չի հաջողվել ամբողջությամբ արմատախիլ անել կոռուպցիան, ստեղծել տնտեսավարողների համար մրցակցային հավասար պայմաններ:

• Տնտեսության մեջ գերիշխող դիրքի չարաշահումը շարունակում է մնալ հաճախ հանդիպող երևույթ:

• Դեռևս ցածր է հասարակության վստահությունը դատահրավական համակարգի նկատմամբ:

Կառավարության ծրագիրը նպատակ ունի լուծելու այս խնդիրները:

Հարգելի պատգամավորներ,

Այս պայմաններում մեզ անհրաժեշտ է բեկումնային զարգացում: Զարգացում, որի հիմնական գրավականը լինելու է մեր սեփական ուժերին ապավինելը և ներքին ռեսուրսների մոբիլիզացիան:

Ակնհայտ է, որ տնտեսությունում, մարդկային կապիտալում և ինստիտուցիոնալ կառույցներում մենք ունենք չիրացված մեծ ներուժ: Դրանից էլ բխում են մեր երեք գերակայությունները:

Առաջինը, մեր տնտեսությունը պետք է լինի մրցունակ:

Արմատական փոփոխությունը, որն առաջարկում ենք տնտեսական քաղաքականության մեջ, այն է, որ այսուհետև պետությունը պատասխանատու է լինելու ոչ միայն բարենպաստ բիզնես միջավայրի համար, այլև ուղղակիորեն մասնակցելու է ձյուղային արդյունաբերական քաղաքականության իրականացմանը: Մասնավոր հատվածի հետ համատեղ կձևավորվի երկխոսության միասնական հարթակ: Դրա միջոցով առավել հեռանկարային յուրաքանչյուր ձյուղի համար կստեղծվի առանձնահատուկ գործիքակազմ, և կսահմանվեն փոխադարձ պարտավորություններ:

Առնվազն 11 ոլորտներում մասնավոր հատվածի հետ ստորագրվելու են համաձայնագրեր, որոնք ներառելու են մասնավորի պարտավորությունները ներդրումների մասով և պետության օժանդակության գործիքակազմը, արդյունքում կրկնապատկվելու են այդ ձյուղերում արտահանման ծավալները:

Ա.

Գործարկվելու են առնվազն երկու ազատ տնտեսական գոտիներ, որտեղ գործելու են նորարարական ձեռնարկություններ՝ ժամանակակից աշխատատեղերով:

Շնորհիվ ԱՊՀ-ի և Եվրամիության հետ ազատ առևտրի համաձայնագրերի՝ հայկական ապրանքների և ծառայությունների համար բացվելու են նոր շուկաներ:

Ստեղծելու ենք վենչուրային հիմնադրամ, որը խրախուսելու է նորարարական բիզնեսները:

Ապահովելու ենք տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում առաջանցիկ զարգացման տեմպերի պահպանում: Դրամաշնորհների միջոցով խրախուսելու ենք ուսումնական հաստատությունների և արտադրողների կապը:

Կառավարությունն ստեղծելու է նպաստավոր միջավայր Հայաստանի տնտեսության մեջ սփյուռքահայերի ներգրավվածության ավելացման և ներդրումների խրախուսման համար:

Զբոսաշրջության ոլորտում կառավարությունն ապահովելու է ենթակառուցվածքների զարգացում: Մասսայական տուրիզմի զարգացման նպատակով խրախուսելու ենք հյուրանոցային ցանցի ընդլայնումը, միջազգային հեղինակավոր բրենդային ցանցերի ներգրավումը, զբոսաշրջային տների համակարգի զարգացումը:

Բ.

Գյուղի և գյուղատնտեսության խնդիրների միասնական դիտարկումը կառավարության քաղաքականության առանցքային փոփոխություններից է:

Գյուղատնտեսությամբ զբաղվելը պետք է լինի շահավետ, իսկ գյուղում ապրելը՝ հարմարավետ:

Շարունակվելու է պետության օժանդակությունը գյուղատնտեսությանը: Առավել մատչելի ենք դարձնելու պարարտանյութը, վառելիքը, գյուղտեխնիկան և սերմերը:

Սուբսիդավորելու ենք գյուղական վարկերի տոկոսադրույքները: Ներդրվելու են սննդամթերքի անվտանգության եվրոպական չափանիշները, ուժեղացվելու է վերահսկողությունը, որպեսզի հայկական մթերք սպառողը վստահ լինի, որ այն անվտանգ է և բարձրորակ:

Առնվազն երեք անգամ ավելացնելու ենք ժամանակակից ջերմոցային տնտեսությունների տարածքները:

Գյուղական դպրոցների և ճանապարհների շինարարությունն ունենալու է առաջնահերթ ֆինանսավորման կարգավիճակ:

Զգալի միջոցներ ենք հատկացնելու գյուղը խմելու ջրով, գազով, ոռոգման ջրով, հեռախոսակապով, կայուն էլեկտրաէներգիայով ապահովելու համար:

Գ.

Չի կարող լինել մրցունակ տնտեսություն և մրցունակ պետություն, որի մեջ երաշխավորված չէ փոքր և միջին բիզնեսի էական դերակատարությունը:

Փոքր և միջին բիզնեսի համար ձևավորվելու է պարզեցված հարկային դաշտ:

Շարունակելու ենք ՓՄՁ-ներին տրամադրել ֆինանսական և տեխնիկական օժանդակություն:

Առաջին անգամ կառավարությունը նպատակաուղղված տեխնիկական և ֆինանսական օժանդակություն է տրամադրելու սկսնակ փոքր և միջին բիզնեսին:

Խոշոր առևտրային օբյեկտների տեղակայման չափորոշիչների սահմանմամբ պաշտպանելու ենք փոքր և միջին բիզնեսի շահերը:

Իրականացնելու ենք տարածքային անհամաչափ զարգացման հաղթահարմանն ուղղված միջոցառումներ, որոնք հնարավորություն կտան առավել արդյունավետ օգտագործել մեր երկրի պոտենցիալը:

Երկրորդ գերակայությունը մարդկային կապիտալի զարգացումն է:

Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի պետք է հնարավորություն ունենա կերտելու իր երջանկությունը հայրենիքում: Կառավարությունը պարտավոր է իր քաղաքացիների համար ստեղծել կայացման և ինքնադրսևորման լայն հնարավորություններ:

Արտագաղթի կանխարգելման լավագույն միջոցն աշխատատեղերի, կենսագործունեության բարենպաստ միջավայրի և արդարության ապահովումն է:

Ա.

Սոցիալական ոլորտում քաղաքականության փոփոխությունը միտված է լինելու անհավասարություն ծնող պատճառների վերացմանը: Առաջին հերթին դա նշանակում է խոցելի խավերի համար հասանելի դարձնել կրթությունն ու աշխատանքը:

Ստեղծելու ենք ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգ, որի նպատակն է լինելու դժվարին իրավիճակում հայտնված մարդկանց, ըստ կարիքի, սոցիալական համալիր ծառայությունների տրամադրումը «Մեկ պատուհան» սկզբունքի միջոցով: Ընդ որում, ծառայությունները ներառում են աշխատանքի տեղավորում, մասնագիտական վերապատրաստում, իրավաբանական խորհրդատվություն, խնամք և այլն:

Ներդրվելու է կուտակային կենսաթոշակային համակարգ, որը երաշխավորելու է ապահով և արժանապատիվ ծերություն: Քաղաքացիների կենսաթոշակային-կուտակային հաշիվների միջոցները պետության կողմից կրկնապատկվելու են:

Հետևողականորեն շարունակվելու է կենսաթոշակների բարձրացման քաղաքականությունը: Իրականացնելու ենք սոցիալական բնակարանաշինության ծրագիր, որը նախատեսում է նաև մատչելի վարձակալական հիմունքներով բնակարանների տրամադրում անապահով խավերին:

Բ.

Հարգելի պատգամավորներ,

21-րդ դարում մրցունակ պետություն նշանակում է կրթված հասարակություն: Պետությունը յուրաքանչյուր քաղաքացու համար ստեղծելու է կրթության հնարավորություն՝ անկախ նրա սոցիալական վիճակից և տարիքից:

Ուշադրության կենտրոնում ենք պահելու կրթության որակը: Երաշխավորված նվազագույն իննամյա կրթությունից անցում ենք կատարելու երաշխավորված անվճար տասներկուամյա, ներառյալ մասնագիտական, կրթությանը:

Անապահով խավերի համար կրթությունը դարձնելու ենք անվճար՝ ներառյալ բարձրագույնը:

Յուրաքանչյուր առաջին դասարանի աշակերտի տրամադրելու ենք անվճար համակարգիչ:

Բուհերը պետք է դառնան ժամանակակից հասարակության հենքը՝ միավորելով գիտությունը, դասավանդումը և նորարարական արտադրությունը:

Վերանայվելու է բուհական ընդունելության համակարգը՝ աստիճանաբար վերացնելով ընդունելության քննությունները: Այսինքն՝ բուհ ընդունվելը կլինի հեշտ, ավարտելը՝ դժվար:

Գիտության ժամանակակից ենթակառուցվածքների ստեղծման նպատակով, համալսարանների և գիտահետազոտական ինստիտուտների հետ համատեղ, նորարարությունների և հետազոտությունների ոլորտներում շարունակվելու են իրականացվել պետական ներդրումներ:

Գ.

Առողջապահության ոլորտում մեր նպատակն է ապահովել ծառայությունների հասանելիությունն ու որակը:

Պետպատվերի շրջանակում, որոշ հիվանդությունների և սոցիալապես անապահով խավերի համար, աստիճանաբար ներդնելու ենք բժշկական ապահովագրության ինստիտուտը:

Շարունակվելու է մարզային բժշկական հաստատությունները վերակառուցելու և վերազինելու ծրագրի իրականացումը՝ հանրապետության ամբողջ տարածքում հասանելի դարձնելով ժամանակակից բժշկական ծառայությունները: Երաշխավորվելու է սրտի անհետաձգելի վիրահատությունը՝ Հայաստանի բոլոր քաղաքացիների համար:

Դ.

Բնապահպանության ոլորտում կառավարության քաղաքականության առանցքը կյանքի որակի բարձրացումն է: Ուժեղացնելու ենք պետության վերահսկողությունը շրջակա միջավայրի պահպանման նկատմամբ՝ օդի, ջրի, կանաչ տարածքների, աղբամշակման բարձր որակական չափանիշների սահմանմամբ:

Խստացնելու ենք ընդերքի շահագործման, ինչպես նաև բնական պաշարների վերականգնման ու վերարտադրության նկատմամբ վերահսկողությունը:

Բացառելու ենք Երևանի կենտրոնում մայրաքաղաքի պատմությանն ու նկարագրին անհարիր կառուցապատումները:

Ե.

Մշակութային քաղաքականության փոփոխությունն ուղղված է լինելու նոր՝ հասարակության կողմից պահանջված ազգային տիպարների ձևավորմանն ու լայն տարածմանը, որոնք օգնելու են մեզ ձերբազատվել կեղծ արժեքներից և հայի նկարագրին ոչ բնորոշ հատկանիշներից:

Պետական պատվերի տեղադրումը նպաստելու է երաժշտության, ֆիլմերի, թատերական ներկայացումների, հեռուստասերիալների միջոցով ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:

Նախատեսվում է ազգային երգ ու պարի դասավանդում դպրոցում, ինչպես նաև ազգային ավանդույթների ու մշակույթի դասընթացների ներմուծում՝ կրթական ծրագրերում:

Զ.

Ժողովրդագրական քաղաքականության ներքո կանխելու ենք հասարակության ծերացման միտումը, կանխարգելելու ենք արտագաղթը, խթանելու ենք ծնելիության աճը, սատարելու ենք հայրենիք վերադառնալ ցանկացողներին:

Երիտասարդ նորապսակները ստանալու են արտոնյալ վարկեր բնակարան ձեռք բերելու համար:

Երկու երեխա ունեցողներն ստանալու են 1 մլն դրամ՝ երրորդ և չորրորդ երեխայի համար, և 1.5 մլն դրամ՝ 5-րդ ու յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծնվելու կապակցությամբ:

Մինչև 10 տարեկան երեխաների բուժումը, այդ թվում՝ հիվանդանոցային, լինելու է անվճար:

Մեծացնելու ենք սփյուռքի ներգրավվածությունը մարդկային կապիտալի զարգացման գործընթացում:

Երրորդ գերակայությունն ինստիտուցիոնալ կարողությունների զարգացումն է:

Հասարակությունը մեզանից պահանջում է հաստատել արդարություն մեր կյանքի բոլոր ոլորտներում: Եվ մենք դա անելու ենք:

Արդյունավետ ինստիտուտները խթաններ են ստեղծում մարդկանց կարողությունները լիարժեք իրագործելու համար: Ինստիտուտների բարեփոխումները բացահայտելու են տնտեսական աճի ներուժը, ապահովելու են տարբեր անձանց և սոցիալական խմբերի միջև տնտեսական օգուտների արդար բաշխումը:

Ա.

Գործարար կարողությունների ազատ դրսևորումն ու ներդրումների աճն անհնար է առանց արդար մրցակցային դաշտի առկայության: Հայաստանի Հանրապետությունում գերիշխող դիրքը պարբերաբար չարաշահող խոշոր բիզնեսների կողմից մրցակցության խաթարումը հանդիսանում է տնտեսության կայուն աճի խոչընդոտ: Առանց մրցակցության ոլորտում արմատական փոփոխությունների՝ անհնար է կառավարության տնտեսական ծրագրի իրագործումը:

Էապես ուժեղացնելու ենք տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովի իրավասություններն ու գործիքակազմը: Վերացնելու ենք շուկա մուտք գործելու խոչընդոտները՝ ապահովելով հավասար մրցակցային պայմաններ բոլորի համար:

Բ.

«Կարգավորման Գիլյոտին» ծրագրի միջոցով շարունակելու ենք վերացնել անտեղի վարչարարական խոչընդոտները, կրճատելով բիզնեսի ծախսերն ու ռիսկերը:

Բոլոր ստուգող մարմիններում լիարժեք ներդրվելու է ռիսկերի վրա հիմնված ստուգումների համակարգը, բարձրացվելու է նշված գործընթացների թափանցիկությունը, իսկ տեսչական մարմինների թիվը կրճատվելու է երկու անգամ: Կտրուկ ավելացնելու ենք պետական ծառայությունների տրամադրումը էլեկտրոնային եղանակով՝ դրանով իսկ նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը:

Ներդնելու ենք պաշտոնյաների վարձատրության միասնական և արդարացի համակարգ, ավելացնելու ենք սոցիալական փաթեթից օգտվողների թիվը:

Գ.

Հարկային և մաքսային համակարգերը պետք է լինեն միջազգայնորեն մրցունակ, ունենան կարողություններ՝ ստվերային տնտեսության կրճատման համար և նպաստեն բիզնես միջավայրի բարելավմանը:

Մաքսային արժեքի որոշումը և մաքսազերծման գործընթացը համապատասխանեցնելու ենք եվրոպական չափանիշներին և կառուցելու ենք ժամանակակից սահմանային անցակետեր:

Դ.

Պաշտպանության, հասարակական կարգի պահպանման, անվտանգության և արդարադատության ոլորտներում կառավարության ծրագրերի կիզակետը լինելու է հասարակության յուրաքանչյուր անդամի պաշտպանվածության մակարդակի բարձրացումը: Մեր քաղաքացիները պետք է զգան, որ ապրում են պաշտպանված, ապահով և անվտանգ երկրում:

Հասարակության մեջ ամրապնդելու ենք զինվորական պարտադիր ծառայության ինստիտուտի նկատմամբ հարգանքը՝ բանակում սոցիալական և կրթական պայմանների շարունակական բարելավման միջոցով:

Ջորացրվողներին ապահովելու ենք աշխատանքով և ուսման արտոնյալ հնարավորություններով:

Կառավարությունն էապես խստացնելու է իրավապահ մարմինների ծառայողների կողմից անձի իրավունքների խախտման համար պատասխանատվությունը:

Առավել խիստ պահանջներ ենք սահմանելու դատավորների և դատախազների մասնագիտական պատրաստման և բարոյական նկարագրի նկատմամբ:

Հարգելի պատգամավորներ,

Ցանկանում եմ հավաստիացնել Ձեզ, որ կառավարությունն ապահովելու է նախորդ ծրագրի շարունակականությունը՝ իրականացնելով ձգնաժամի պատճառով հետաձգված միջոցառումները:

Գյումրու Տեխնոպարկում հիմնված և գործող հինգ լաբորատորիաների կողքին սկսվել են Տեխնոպարկի նոր շենքի շինարարական աշխատանքները:

Դիլիջանում կենտրոնական բանկի նորակառույց մասնաշենքի և հարակից ենթակառուցվածքների գործարկումն էապես նպաստելու է մոտ ապագայում ֆինանսական կենտրոնի ձևավորմանը:

Հայաստանի Հանրապետության կառավարության պատվերով մեկնարկել են ռադիոիզոտոպային արագացուցչի կառուցման աշխատանքները, որոնք ավարտվելու են երկու տարվա ընթացքում և Երևանում կգործի գերժամանակակից օնկոլոգիական ախտորոշման կենտրոն:

Այս տարի մեկնարկել են ռազմավարական նշանակություն ունեցող Հյուսիս-Հարավ ավտոմայրուղու մեծածավալ շինարարական աշխատանքները:

Մեծամորի ատոմակայանի նոր էներգաբլոկի կառուցման աշխատանքների բանակցային փուլն ավարտված է և մշակվում է ֆինանսական ներդրումների ճանապարհային քարտեզ:

Հարգելի պատգամավորներ,

Կառավարությունը սույն ծրագրի իրականացմամբ 2012-2017 թվականների ընթացքում նպատակադրում է՝

- զարգացած երկրների համեմատ տնտեսական աճի առաջանցիկ տեմպերի ապահովում՝ համախառն ներքին արդյունքի 5-7 տոկոս աճի ապահովման միջոցով,
- ներմուծման նկատմամբ արտահանման աճի առաջանցիկ տեմպերի ապահովում,
- նվազագույն աշխատավարձի մակարդակի առնվազն կրկնապատկում,
- նվազագույն աշխատավարձ/աղքատության գիծ ցուցանիշի առնվազն 140 տոկոս մակարդակի ապահովում,
- ծնելիության գումարային գործակցի աճ՝ մինչև 1.8-ի,
- 5-6 տարեկան երեխաների համար նախադպրոցական կրթության առնվազն 90 տոկոսով հասանելիության ապահովում,
- միջին աշխատանքային (ապահովագրական) կենսաթոշակի մակարդակի բարձրացում՝ հասցնելով աղքատության գծի համեմատ 125-135 տոկոսի,
- աղքատության կրճատման ապահովում՝ 8-10 տոկոսային կետով,
- 100 հազարից ավելի նոր աշխատատեղերի ստեղծում, ընդ որում, ոչ գյուղատնտեսական զբաղվածություն ունեցողների թիվը կավելանա 30-50 հազարով,
- պետական եկամուտների հավաքագրման մակարդակի աճի ապահովում՝ տարեկան համախառն ներքին արդյունքի 0.3-0.4 տոկոսային կետի չափով:

Հարգելի պատգամավորներ,

Ազգային Ժողովի ընտրությունները ցույց տվեցին, որ այս ծրագրում արտացոլված դրույթները պահանջված են հասարակության կողմից և խիստ արդիական:

Մենք հետևողականորեն գնում ենք փոփոխությունների ճանապարհով: Արագ փոփոխվող աշխարհում մեզ սպասում են նոր մարտահրավերներ և նոր խնդիրներ: Դրանց լուծումները նույնպես պահանջում են նոր մոտեցումներ:

Անփոփոխ են մնալու միայն արժեքները՝ հայրենասիրությունը, ազնվությունը, արդարությունը, աշխատասիրությունը, նվիրվածությունը և հանդուրժողականությունը:

Այս արժեքներն են, որ ապահովելու են մեր առաջընթացը:

Խոսքս ցանկանում եմ ավարտել Հանրապետության Նախագահի հետևյալ մտքով:

Նոր Հայաստան կերտելու պատմական հնարավորությունը մեր ձեռքերում է, առանց չափազանցության՝ մեզանից յուրաքանչյուրի ձեռքերում: Եվ մենք դա անելու ենք:

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀՀ կառավարության 2012 թվականի
հունիսի 18-ի N 730-Ա որոշման

Ð²Ú²êî²ÜÆ Ð²Üð² ä º îàôÂÚ²Ü

Î²è²ì²ðàôÂÚ²Ü

Ì ð ² ¶Æð

ք. Երևան
18 հունիսի, 2012 թ.

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Կառավարության ծրագիրը մշակվել է՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության, Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի հանրապետական կուսակցության և «Օրինաց երկիր» կուսակցության նախընտրական ծրագրերի հիմնական դրույթները, ինչպես նաև խորհրդարանական կուսակցությունների ծրագրերում ներկայացված՝ նշված փաստաթղթերի հետ համադրելի գաղափարները:

Կառավարության ծրագրի հիմքում ընկած է այն գաղափարը, որ պետությունը պարտավոր է մարդու համար ստեղծել արժանապատիվ ապրելու և արարելու լավագույն հնարավորությունները: Վերջին մարտահրավերները մեզ ստիպեցին նախ և առաջ ամրապնդել այդ հնարավորությունների ապահովման համար անհրաժեշտ պետականության հիմքերը: Այժմ շեշտադրելու ենք մեր գործողությունների արդեն իսկ ակնառու երկրորդ ուղղությունը՝ պետական ինստիտուտների հնարավորություններն ուղղելով մարդուն, հասարակության յուրաքանչյուր անդամի:

Վերջին տարիները մեր պետության համար նոր մարտահրավերների և բարդ փորձությունների հաղթահարման ժամանակաշրջան էր: Այդ ընթացքում մենք կարողացանք՝

- էապես մեղմել ներքին քաղաքական պառակտվածության և անհանդուրժողականության դրսևորումները,
- երկրի բնականոն կյանքը զերծ պահել մեր հարևանությամբ ընթացող պատերազմական գործողություններով պայմանավորված ցնցումներից,
- բանակաշինությամբ և ակտիվ արտաքին քաղաքականությամբ ապահովել մեր երկրի անվտանգությունը՝ ամրապնդելով մեր կողմից պարտադրված խաղաղության երաշխիքները,
- մեղմել համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի տնտեսական հետևանքները և ձևավորել ավելի տարազանված (դիվերսիֆիկացված) տնտեսություն,

- ֆինանսատնտեսական ճգնաժամի սուղ պայմաններում բարձրացնել սոցիալական նպաստները, թոշակներն ու աշխատավարձերը՝ մեղմելով ճգնաժամի սոցիալական հետևանքները,
- էապես բարձրացնել ԱՊՀ-ի տարածքում գործընկերների հետ հարաբերությունների մակարդակն ու լրջորեն ընդլայնել համագործակցության դաշտը,
- Եվրամիության հետ սկսել խոր և համապարփակ ազատ առևտրի գոտու (ԽՀԱԱԳ) ստեղծման շուրջ բանակցությունները,
- զգալիորեն հեշտացնել պետության կողմից անձանց մատուցվող բազմաթիվ ծառայությունների ստացումը:

2008 թվականին մենք նախաձեռնեցինք լայնամասշտաբ բարեփոխումների նոր փուլ, որը ներառում է հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտները: Արտաքին մարտահրավերների բացասական հետևանքների հաղթահարումը մեզանից խլեց զգալի ռեսուրսներ, ինչի հետևանքով բարեփոխումների մի մասը դեռևս չի հասել իր տրամաբանական ավարտին: Այժմ մեր խնդիրն է բարեփոխումների առաջին արդյունքները ձևափոխել կայուն և հարատև ինստիտուցիոնալ հարաբերությունների, դրանք դարձնել բոլորի համար շոշափելի և տեսանելի: Յուրաքանչյուր ոք պետք է տեսնի և զգա կառավարության կողմից իրականացվող փոփոխությունների արդյունքները: Յուրաքանչյուր ոք պետք է ունենա ինքնադրսևորման և ինքնաիրացման բոլոր հնարավորությունները: Խորհրդարանական ընտրությունների արդյունքները գրավականն են այն փաստի, որ այս ծրագիրը պահանջված է ու ժամանակին, և մենք ունենք ժողովրդի աջակցությունը՝ այն կյանքի կոչելու համար:

1. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կառավարության ծրագիրը հիմնված է հետևյալ 3 գերակայությունների վրա՝

ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ 1. Տնտեսության մրցունակության բարձրացում որպես երկարաժամկետ կայուն աճի գլխավոր պայման:

Այդ առումով գործողություններ ենք իրականացնելու հետևյալ ուղղություններով.

- բիզնես և ներդրումային միջավայրերի շարունակական բարելավում,
- նորարարական տեխնոլոգիաների ներգրավվածության ընդլայնում,
- հավասար մրցակցային պայմանների ապահովում բոլորի համար,
- տնտեսության տարազանման ապահովում՝ տնտեսության կառուցվածքում արտահանելի հատվածների տեսակարար կշռի ավելացման միջոցով,
- տարածքային համաչափ զարգացում՝ Երևանի համեմատ մարզերի տնտեսական ակտիվության առաջանցիկ աճի ապահովման և հարմարավետ գյուղի ձևավորման միջոցով,
- տնտեսական աճին միտված և պետական-մասնավոր սերտ գործընկերության վրա հիմնված հասանելի, կայուն, մատչելի, արտադրական ենթակառուցվածքների զարգացում,
- գյուղատնտեսության արդիականացում և ագրոբիզնեսի զարգացմանն օժանդակում,
- գործարարների և քաղաքացիների համար ֆինանսական ռեսուրսների հասանելիության, մատչելիության, ֆինանսական գործիքների բազմազանության ապահովում,
- զարգացած երկրների համեմատ տնտեսական աճի առաջանցիկ տեմպերի ապահովում, մասնավորապես, նպատակաուղղված արդյունաբերական քաղաքականության վարման միջոցով, ինչը

թույլ կտա կրճատել Հայաստանի և զարգացած երկրների բնակչության եկամուտների միջև տարբերությունը,

- միջազգային ինտեգրացիայի խորացման միջոցով Հայաստանի տնտեսական գործընկերության ընդլայնում, արտահանման տարբեր շուկաներ մուտքի հնարավորությունների մեծացում՝ հատկապես կարևորելով ԱՊՀ և Եվրամիություն գործընկերությունը,
- հնարավոր արտաքին շոկերի նկատմամբ տնտեսության դիմադրողականության բարձրացում,
- երկրի տնտեսական անվտանգության ապահովմանն ուղղված համալիր ծրագրերի իրականացում:

ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ 2. Մարդկային կապիտալի զարգացում:

Այս առումով գործողություններ ենք իրականացնելու հետևյալ ուղղություններով.

- որակյալ կրթական, առողջապահական և մշակութային ծառայությունների մատչելիության ապահովում,
- աղքատություն և անհավասարություն ծնող պատճառների վերացում՝ սոցիալապես խոցելի աշխատունակ խավերի համար կրթության և աշխատանքի հասանելիության ապահովման միջոցով,
- նպաստավոր պայմանների ստեղծում՝ հայ հոգևոր ու մշակութային ժառանգության պահպանման, ազգային արժեքների և ավանդույթների վերարտադրության ու զարգացման համար,
- հասարակության միջին խավի ընդլայնում՝ որպես մարդկային կապիտալի զարգացման հուսալի հենք,
- հասարակության սոցիալապես խոցելի և սահմանափակ կարողություններով խմբերին ծառայությունների թիրախային մատուցում,
- արժանապատիվ ծերության ապահովում՝ հասարակության յուրաքանչյուր անդամի համար,
- աշխատատեղերի, կենսագործունեության բարենպաստ միջավայրի, ինքնահիրացման պայմանների առկայության և արդարության ապահովում՝ որպես արտագաղթի կանխարգելման արդյունավետ միջոց,

- մարդու և բնության ներդաշնակ զարգացում,
- սփյուռքի ներգրավվածության մեծացում՝ մարդկային կապիտալի զարգացման գործընթացում:

ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ 3. Ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում:

Այս առումով գործողություններ ենք իրականացնելու հետևյալ ուղղություններով.

- հանրային ինստիտուտների ամրապնդում՝ մարդկային կապիտալի զարգացման, տարբեր ինստիտուտների ներքին և արտաքին փոխգործունեության կանոնակարգման, դրանց գործառույթների կրկնօրինակման բացառման, մասնավոր հատվածի և քաղաքացիական հասարակության հետ դինամիկ համագործակցության միջոցով,
- պետական կառավարման համակարգում «խաղի կանոններ սահմանելու և որակյալ ծառայություններ մատուցելու» սկզբունքի գերակայության ապահովում,
- հասարակության մեջ արմատավորված արատի՝ կոռուպցիա ծնող պատճառների վերացում, այդ գործընթացում թափանցիկության բարձրացում՝ շեշտադրելով կոռուպցիայի դեմ պայքարի «կանխարգելիչ» մոտեցման գերակայությունը,
- պետական ինստիտուտների նկատմամբ հասարակության յուրաքանչյուր անդամի վստահության բարձրացման ապահովում՝ հաշվետվողականության, թափանցիկության և պատասխանատվության բարձրացմամբ,
- պետական կառավարման համակարգում մասնագիտական որակների պահանջների բարձրացում և որակյալ մասնագետների ներգրավման հստակ մեխանիզմների ստեղծում,
- այնպիսի հարկային, մաքսային և մրցակցության պաշտպանության համակարգերի ձևավորում, որոնց պայմաններում Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը հավասարաչափ և անվերապահորեն կկիրառվի բոլոր տնտեսավարողների նկատմամբ:

2. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Թույլ համաշխարհային պահանջարկը և արտաքին աշխարհի էական անորոշությունները սահմանափակում են արտաքին տնտեսությունից ռեսուրսների ներհոսքի հնարավորությունը: Առաջիկա հինգ տարվա ընթացքում տնտեսության ներքին ռեսուրսների վրա հիմնված զարգացումը կունենա Հայաստանի տնտեսական աճի ապահովման համար առաջնային դերակատարում: Կառավարությունն այս պայմաններում ակնկալում է արտահանման ծավալների նպատակադրված ավելացմանը հասնել հիմնականում արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության շնորհիվ, ինչը ենթադրում է ներքին ռեսուրսների համակարգված և արդյունավետ օգտագործում: Կառավարությունը սույն ծրագրի իրականացմամբ 2012-2017 թվականների ընթացքում նպատակադրում է՝

- զարգացած երկրների համեմատ տնտեսական աճի առաջանցիկ տեմպերի ապահովում՝ համախառն ներքին արդյունքի 5-7 տոկոս աճի ապահովման միջոցով,
- ներմուծման նկատմամբ արտահանման աճի առաջանցիկ տեմպերի ապահովում,
- նվազագույն աշխատավարձի մակարդակի առնվազն կրկնապատկում,
- նվազագույն աշխատավարձ/աղքատության գիծ ցուցանիշի առնվազն 140 տոկոս մակարդակի ապահովում,
- ծնելիության գումարային գործակցի աճ՝ մինչև 1.8-ի:
- 5-6 տարեկան երեխաների համար նախադպրոցական կրթության առնվազն 90 տոկոսով հասանելիության ապահովում,
- միջին աշխատանքային (ապահովագրական) կենսաթոշակի մակարդակի բարձրացում՝ հասցնելով աղքատության գծի համեմատ 125-135 տոկոսի,
- աղքատության կրճատման ապահովում՝ 8-10 տոկոսային կետով,

- 100 հազարից ավելի նոր աշխատատեղերի ստեղծում, ընդ որում՝ ոչ գյուղատնտեսական զբաղվածների թվի ավելացում 30-50 հազարով,
- պետական եկամուտների հավաքագրման մակարդակի աճի ապահովում՝ տարեկան համախառն ներքին արդյունքի 0.3-0.4 տոկոսային կետի չափով:

Կառավարության գործողությունների արդյունքային ցուցանիշները գնահատվել են առկա միտումների հիման վրա: Արտաքին ցնցումների դրսևորումները և Հայաստան ներթափանցման ուղիներն ու ազդեցությունները նկարագրված են սույն բաժնի վերջին մասում:

3. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ելնելով Հայաստանի տնտեսության մրցունակության բարձրացման գերակայությունից՝ կառավարությունը նախատեսում է իրականացնել ձյուղային համակցված և ներդաշնակ քաղաքականություն՝ շեշտադրելով ներքին ռեսուրսների արդյունավետ և համակարգված օգտագործումը:

2009 թվականի համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամն ակներև դարձրեց Հայաստանի տնտեսության ուժեղ և թույլ կողմերը: Այսօր ամբողջությամբ վերականգնվել է նախաճգնաժամային անվանական ՀՆԱ-ի ցուցանիշը, տնտեսությունը դարձել է ավելի տարազանված և ուժեղ՝ առավել ունակ դիմակայելու արտաքին ցնցումներին:

Առաջնորդվելով արձանագրված ձեռքբերումներով՝ կառավարությունը ծրագրում է տնտեսական աճի հայեցակարգից անցնել տնտեսական զարգացման հայեցակարգին՝ հիմնվելով այն սկզբունքի վրա, որ տնտեսական աճի բարձր տեմպերի ապահովումը դեռևս բավարար չէ մրցունակ տնտեսություն ունենալու համար: Տնտեսական աճը մեր երկրի առջև ծառացած հիմնախնդիրները չի կարող լուծել, եթե այն չի հիմնվում տնտեսության նոր ոլորտների, գործունեության նոր տեսակների, նոր ձեռնարկությունների, նոր ապրանքների արտադրության և նոր ծառայությունների մատուցման վրա, որոնք մրցունակ կլինեն համաշխարհային շուկաներում: Այս խնդրի արդյունավետ լուծման համար կառավարությունը կարևորում է արդյունաբերական քաղաքականության իրականացումը, ինչպես նաև միջին և փոքր բիզնեսի կայացման և զարգացման երաշխիքների ստեղծումը:

Կառավարությունը նպատակ է դրել 2012-2017 թվականներին ապահովել երկարաժամկետ կայուն տնտեսական աճի հիմքեր և համաշխարհային տնտեսական աճից ավելի բարձր՝ 5-7 տոկոս իրական աճ՝ տարեցտարի ավելացնելով բնակչության եկամուտների մակարդակը: Այդ նպատակով կառավարությունը՝

- ձևավորելու է տնտեսական աճի բաղադրիչների որակական փոխակերպման և արդյունավետ կառուցվածքային տեղաշարժերի կառավարելի համակարգ՝ աջակցելով արտահանող, բարձր տեխնոլոգիաներ կիրառող ռեսուրսախնայող և գիտատար տնտեսությանը միտված ոլորտներին ու ընկերություններին,
- պահպանելու է ձեռք բերված մակրոտնտեսական կայունությունը՝ վերջին տարիներին վարվող հարկաբյուջետային քաղաքականության ուղղությունների և բյուջետային կարգապահության պահպանման, ինչպես նաև դրամավարկային քաղաքականության հետ հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետ կոորդինացման միջոցով:

2012-2017 թվականներին կառավարության տնտեսական քաղաքականության հիմնական ուղղություններից է լինելու պետություն-մասնավոր հատվածի համագործակցության սկզբունքի ներքո՝ մասնավորապես երկկողմ պարտավորությունների սահմանման միջոցով ժամանակակից տեխնոլոգիաների ներգրավմամբ միջազգային լավագույն չափանիշներին համապատասխանող հայկական ընկերությունների կայացմանը նպաստելը:

Այս ոլորտում առավելագույն արդյունք ստանալու համար կառավարությունը խրախուսելու է, որ գործընթացում ազատորեն ընդգրկվեն բոլոր կարող անձինք, կազմակերպությունները և իրենց նպաստը բերեն տնտեսության զարգացմանը:

3.1.1. Գործարար և ներդրումային միջավայրը

Բարենպաստ գործարար միջավայրը ժամանակակից աշխարհում ներդրումների ներգրավման՝ հետևաբար և երկարաժամկետ տնտեսական աճի հիմնական գրավականն է: Այս առումով կառավարությունը հետևողական քայլեր է կատարելու գործարարությամբ զբաղվելը դյուրացնելու և անհարկի պետական միջամտության բեռը թոթափելու ուղղությամբ: Կառավարության գործողությունների արդյունքում՝

- կրճատվելու են շինարարական թույլտվության ստացման ընթացակարգը և ժամկետը՝ էլեկտրոնային համակարգերի ներդրման միջոցով՝ միաժամանակ ուժեղացնելով վերահսկողությունը նորմատիվ պահանջների կատարման նկատմամբ,

- էապես կրճատվելու են կոմունալ ծառայությունների բաժանորդագրման ժամկետները,
- «Կարգավորման Գիլյոտին» ծրագրի միջոցով վերացվելու են անտեղի վարչարարական խոչընդոտները,
- բացառվելու է տարբեր պետական մարմիններ կրկնվող տեղեկատվությամբ հաշվետվություն ներկայացնելը,
- կրճատվելու և պարզեցվելու է տնտեսական գործունեության թույլտվության համակարգը,
- ամբողջությամբ ներդրվելու է կարգավորման ազդեցության գնահատման մեխանիզմը, ինչը հնարավորություն կընձեռի խուսափելու լրացուցիչ բեռ առաջացնող նոր կարգավորումից,
- փոքր և միջին բիզնեսի համար ձևավորվելու է պարզեցված հարկային դաշտ,
- վերացվելու է շահութահարկի նվազագույն շեմի կիրառման պրակտիկան,
- փոքրացվելու է կանխիկով գործարքի կատարման շրջանակը՝ նպաստելով ստվերային տնտեսության ծավալի կրճատմանը,
- ներդրվելու են արդյունավետ սեփականատիրության լավագույն նորմերը՝ մեր ազգային հարստության և հատկապես հողի լիարժեք օգտագործման նպատակով,
- ներդրվելու է գույքահարկի արդարացի համակարգ՝ ապահովելով ավելի շատ գանձում բարձրարժեք գույքից,
- բոլոր ստուգող մարմիններում լիարժեք ներդրվելու է ռիսկերի վրա հիմնված ստուգման համակարգը, բարձրացվելու է նշված գործընթացի թափանցիկությունը, իսկ տեսչական մարմինների օպտիմալացման արդյունքում դրանց թիվն առնվազն կիսով չափ կրճատվելու է:

3.1.2. Ֆինանսական միջնորդությունը

Տնտեսական զարգացման համար էական է ֆինանսական միջնորդության ավելացումը, որը հնարավորություն է տալիս ներքին խնայողությունն ուղղորդելու արդյունավետ ներդրումներին: Հայաստանի Հանրապետության տնտեսությունում ֆինանսական միջնորդության անցած

տարիների ձեռքբերումների պահպանումը և ծավալի շարունակական մեծացումն առանցքային են ներքին ռեսուրսների հաշվին տնտեսական աճի ապահովման գործում: Չնայած վերջին տարիներին արձանագրված զգալի աճին՝ զարգացած տնտեսությունների համեմատ Հայաստանի ֆինանսական համակարգը դեռևս փոքր է և լիարժեքորեն չի իրականացնում ներքին խնայողությունը ներդրման փոխարկելու՝ իր հիմնական առաքելությունը: Այս ոլորտում կառավարությունն աջակցելու է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին և ֆինանսական միջոցներն ուղղելու է տնտեսության որակական կառուցվածքի բարելավմանը: Նման քաղաքականության կարևորագույն ուղղությունն է ֆինանսական ռեսուրսների հասանելիության և գործիքների բազմազանության ապահովումը:

Առաջնորդվելով այս սկզբունքներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հետ համատեղ, կառավարության գործողությունների արդյունքում՝

- ընդլայնվելու է ֆինանսական ծառայությունների շրջանակը և բարձրացվելու է դրանց հասանելիությունը (լիզինգ, արտահանման ֆինանսավորման գործիքներ, նորաստեղծ բիզնեսի ֆինանսավորում, ինովացիոն ծրագրերի ֆինանսավորում և այլն),
- ընդլայնվելու է գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող՝ մատչելի պայմաններով վարկավորման ծավալը,
- պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի գործարկումը նպաստելու է խնայողության ավելացմանը, առավել երկարաժամկետ վարկային ռեսուրսների ստեղծմանը և ներդրումային ծրագրերի ֆինանսավորման հարցում ֆինանսական համակարգի դերի մեծացմանը,
- նպատակաուղղված քաղաքականությամբ ֆինանսական շուկայում ապահովվելու է նոր մասնակիցների՝ ներդրումային հիմնադրամների մուտքը ֆինանսական համակարգ, հիմնադրամներ, որոնք հասարակությանը կմատուցեն ոչ միայն նոր ծառայություններ, այլև կստեղծեն նոր աշխատատեղեր,
- խրախուսվելու է վարկային և ապահովագրական կազմակերպությունների դերի հետագա աճը, ինչպես նաև արժեթղթերի շուկայի աշխուժացումը,

- մատչելի բնակարանաշինության ֆինանսավորման նպատակով խրախուսվելու են ներդրումները Ազգային հիփոթեքային ընկերության պարտատոմսերում՝ միաժամանակ սուբսիդավորելով սոցիալական խմբերի համար հիփոթեքային վարկերի տոկոսադրույքը:

Այս միջոցառումների արդյունքում նախատեսվում է տարեցտարի բարձրացնել տնտեսության իրական և ֆինանսական հատվածների ինտեգրման աստիճանը:

3.1.3. Բյուջետային համակարգը

Բյուջետային համակարգը և դրա կառավարումը կարևոր են թե՛ արդյունավետ ծախսային քաղաքականության, թե՛ իշխանությունների հանրային հաշվետվողականության առումով:

Քանի որ զարգացող տնտեսությունը դեռևս կարիք ունի աջակցության, իսկ տնտեսության հարկաբյուջետային խթանման հնարավորությունը սահմանափակված է պարտքի կայունության խնդրով, հարկաբյուջետային քաղաքականության գերխնդիրն է դրանց խելամիտ հաշվեկշռումը: Այս համատեքստում կառավարությունը բյուջետային քաղաքականության առավել կարևոր ուղղություններ է համարում՝

- միջազգային շուկաներում անորոշության մեծացման պայմաններում տնտեսական իրավիճակին համապատասխան հարկաբյուջետային ցուցանիշների ծրագրումը և ճկուն հարկաբյուջետային քաղաքականության իրականացումը,
- հիմնականում ներքին ռեսուրսների օգտագործման վրա հիմնված քաղաքականության վարումը և դրամավարկային քաղաքականության հետ արդյունավետ համակարգման միջոցով թիրախային արդյունքների ապահովումը: Մասնավորապես՝
  - շարունակվելու է պետական եկամուտների հավաքման վարչարարության արդյունավետության բարձրացումը, որը կլինի եկամտային քաղաքականության գերակա ուղղություններից մեկը: Դրա շնորհիվ համախառն ներքին արդյունքի նկատմամբ հարկային եկամտի մակարդակը կավելանա տարեկան միջին հաշվով 0.3-0.4 տոկոսային կետով,

- պետական ծախսերի ֆինանսավորումը փոխառու միջոցներով իրականացվելու է ներքին պարտքի, ինչպես նաև շահավետ-արտոնյալ պայմաններով ներգրավված արտաքին վարկերի հաշվին: Պետական բյուջեի պակասուրդի արդյունավետ կառավարման շնորհիվ պետական պարտքը կպահպանվի տնտեսության զարգացման համար անվտանգ միջակայքում:

Կառավարությունը կարևորում է պետական միջոցներն արդյունավետ, նպատակային և թափանցիկ ծախսելը: Այս առումով՝

- ծախսերի փաստացի կատարումն իրականացվելու է սահմանված երկարաժամկետ-միջնաժամկետ ծախսային գերակայություններին համապատասխան: Բյուջետային ռեսուրսները պետք է վերաբաշխվեն դեպի առավել բարձր արդյունավետություն ունեցող ծրագրերը,
- շարունակվելու է ծրագրային բյուջետավորման ներդրման բարեփոխումը, որի արդյունքում այն կլինի իրավական հիմքով ապահովված գործուն համակարգ,
- լիարժեք գործելու է գնումների առցանց ավտոմատ համակարգը, որը հնարավորություն է տալու հասարակությանն ու տնտեսավարողներին հսկելու գնումների վերաբերյալ հայտարարությունները և բոլոր ընթացակարգերը՝ նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը,
- կառավարությունը շարունակելու է միջոցներ ձեռնարկել բյուջետային գործընթացների թափանցիկության և կատարման ընթացքի նկատմամբ մասնագիտական ու հանրային հսկողության աստիճանի բարձրացման համար,
- շարունակվելու է ներքին աուդիտի և ֆինանսական հսկողության համակարգերի բարելավման աշխատանքը,
- բարձրացվելու է պետական մարմինների բյուջետային ինքնուրույնության ու պատասխանատվության աստիճանը:

3.1.4. Տնտեսության հիմնական ճյուղերը

3.1.4.1. Արդյունաբերությունը

Կառավարությունը փոփոխություն է կատարում արդյունաբերական քաղաքականության մոտեցումներում: Այսուհետև պետությունը ոչ միայն

պատասխանատու է լինելու բարենպաստ բիզնես միջավայրի համար, այլև մասնավոր հատվածը ուղղակիորեն ներգրավելու է ճյուղային արդյունաբերական քաղաքականության մեջ: Մասնավոր հատվածի հետ համատեղ կձևավորվի երկխոսության միասնական հարթակ: Դրա միջոցով առավել հեռանկարային յուրաքանչյուր ճյուղի համար կստեղծվի առանձնահատուկ գործիքակազմ, և կսահմանվեն փոխադարձ պարտավորություններ:

Այս տեսլականի իրագործումը պահանջում է փուլային մոտեցում՝ ենթադրելով աստիճանական անցում ռեսուրսաինտենսիվ արտադրություններից դեպի ունակության և հմտության վրա հիմնված, և, այնուհետև, բարձր տեխնոլոգիական արտադրությունների:

Ելնելով նշվածից՝ կառավարությունը կշարունակի իրականացնել արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականություն, որն ապահովելու է՝

- երկարաժամկետ տնտեսական աճի նոր շարժիչ ոլորտների ձևավորումը՝ շեշտադրելով արտահանման զարգացումը,
- ոլորտային ռազմավարության պլանավորման, որոշումների կայացման, իրականացման և արդյունքների գնահատման գործընթացներում հիմնական շահագրգիռ կողմերի (գործարար միություն, ոլորտային և մասնագիտական ասոցիացիա, կրթական և հետազոտական կազմակերպություն, ընկերություն և այլն) ներգրավումը,
- անդրազգային ընկերությունների ներգրավումը տնտեսության մեջ,
- առնվազն 2 ազատ տնտեսական գոտու ձևավորումը, որոնք միտված են օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը, արտահանման ծավալի, անվանացանկի և աշխարհագրության ընդլայնմանը,
- բարձր տեխնոլոգիական ճյուղերի զարգացման խթանումը՝ նպաստավոր միջավայրի ստեղծման և ներդրումների խթանման միջոցով,
- տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում առաջանցիկ զարգացման տեմպի պահպանման միջոցով ուսումնական հաստատությունների և արտադրողների կապի խթանումը,

- նորարարական տեխնոլոգիաներ խրախուսող վենչուրային հիմնադրամների ստեղծման խթանումը,
- համապատասխան իրավական ակտերով լրացուցիչ արտոնությունների սահմանումը այն խոշոր ներդրումային ծրագրերի համար, որոնք կպարունակեն տեխնոլոգիական նորարարություն, կունենան արտահանման ուղղվածություն և կստեղծեն աշխատատեղեր:

3.1.4.2. Գյուղատնտեսությունը և գյուղը

Գյուղի և գյուղատնտեսության խնդիրների միասնական դիտարկումը կառավարության քաղաքականության առանցքային փոփոխություններից է: Կառավարությունը նպատակ է դնում, բարձրացնելով գյուղատնտեսության արդյունավետությունը, գյուղում զուգահեռաբար ստեղծել կյանքի հարմարավետ պայմաններ՝ յուրաքանչյուրի լիարժեք ինքնադրսևորման համար, այն գիտակցումով, որ չի կարող լինել զարգացող գյուղատնտեսություն՝ առանց հարմարավետ գյուղի: Առանձնակի ուշադրություն է դարձվելու բարձր լեռնային և սահմանամերձ շրջաններին: Նշված խնդրի համատեքստում կառավարության գործողությունների արդյունքում՝

- ապահովվելու է գյուղատնտեսական տեխնիկայի ու տեխնոլոգիայի շարունակական արդիականացումը: Գյուղատնտեսական ժամանակակից տեխնիկայի ու սարքավորումների ձեռքբերումն իրականացվելու է մատչելի ֆինանսավորման և սպասարկման ձկուն մեխանիզմների ներդրման շնորհիվ,
- առնվազն երեք անգամ ավելացվելու են ժամանակակից ջերմոցային տնտեսությունների տարածքները, ինչի արդյունքում էապես կմեղմվի մի շարք գյուղմթերքների գների սեզոնային տատանումը, ինչպես նաև շեշտակիորեն կավելանա դրանց արտահանման ծավալը, և կստեղծվեն հազարավոր նոր աշխատատեղեր,
- ձկնաբուծության ոլորտում աստիճանաբար ներդրվելու են ժամանակակից լավագույն տեխնոլոգիաները, և ստեղծվելու են ձկնամթերքի վերամշակման ժամանակակից կարողություններ՝ ապահովելով արտադրանքի թողարկման եռապատիկ աճ,

- շարունակվելու է բուսաբուծության ճյուղի արդյունավետության բարձրացման նպատակով սերմնաբուծության համակարգի զարգացման պետական աջակցության ծրագրերի իրականացումը: Գյուղատնտեսության ոլորտի տնտեսավարողներին բարձր վերարտադրությամբ սերմեր մատակարարելով կբարձրացվի բուսաբուծության և անասնակերի ավելացված ծավալների միջոցով անասնապահության ճյուղերի գործունեության արդյունավետությունը,
- շարունակվելու են գյուղատնտեսությունում օգտագործվող հիմնական ռեսուրսների՝ հանքային պարարտանյութի, դիզելային վառելանյութի, տարբեր մշակաբույսերի բարձր վերարտադրության սերմերի մատչելիության մակարդակի բարձրացման ծրագրերը՝ գների մասնակի սուբսիդավորման և ապրանքային վարկերի միջոցով,
- անասնապահության ճյուղի զարգացման նպատակով իրականացվելու են գյուղատնտեսական կենդանիների տոհմային հատկանիշների բարելավման և մթերատվության բարձրացման ծրագրերը՝ տոհմային երինջների ներկրմամբ և սելեկցիայի ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ,
- տարբեր լծակներով և մեխանիզմներով խթանվելու է փոքր հողակտորների համատեղ օգտագործման և խոշորացման, հողերի միավորման, կոոպերացիայի կազմակերպման միջոցառումների իրականացումը,
- նվազեցվելու են բնության կողմից հասցվող հնարավոր վնասները՝ հակակարկտային ժամանակակից համակարգերի ներդրման միջոցով,
- ներդրվելու են սննդամթերքի անվտանգության միջազգային չափանիշներին համապատասխանության վերահսկողական մեխանիզմներ, որպեսզի հայկական մթերք սպառողը վստահ լինի, որ այն անվտանգ է և բարձրորակ,
- խթանվելու է առավել բարձր մրցունակություն ապահովող և արտահանման կողմնորոշում ունեցող գյուղմթերքների և գյուղատնտեսական արտադրատեսակների արտադրությունը՝ արդ-

յունքում ապահովելով թե՛ գյուղմթերքի, և թե՛ վերամշակված գյուղատնտեսական արտադրատեսակների արտահանման ծավալի նկատելի աճ,

- ձևավորվելու են գյուղմթերքի իրացման արդյունավետ ենթակառուցվածքներ ու գործուն մեխանիզմներ՝ ներառյալ տոնավաճառների կազմակերպումը,
- զարգացվելու են գյուղատնտեսական ոլորտի խորհրդատվության համակարգերը՝ նպաստելով գյուղատնտեսությամբ զբաղվողների աշխատանքի արտադրողականության աճին:

Գյուղում կյանքի որակի բարձրացման նպատակով կառավարության ջանքերն ուղղվելու են՝

- գյուղական աղքատության կրճատմանը,
- մատուցվող պետական ծառայությունների որակի կտրուկ բարձրացմանը,
- գյուղական համայնքների կարողությունների զարգացմանը՝ հնարավորինս հասանելի դարձնելով խմելու ջուրը, գազը, էլեկտրաէներգիան, հեռախոսակապը, համացանցը, բժշկական ծառայությունները,
- գյուղական ճանապարհների ու տրանսպորտային ժամանակակից ցանցերի բարելավմանը:

3.1.4.3. Քաղաքաշինությունը

Քաղաքաշինության ոլորտի զարգացման առջևահերթ խնդիրն է իրականացնել համապատասխան ռազմավարություն՝ թիրախավորելով քաղաքաշինական խնդիրների համալիր լուծումը և ոլորտի նորմատիվ-իրավական բազայի կատարելագործումն ու արդիականացումը: Այդ առումով կարևորվում են՝

- Հայաստանի բնակարանային ֆոնդի ֆիզիկական և բարոյական մաշվածության գույքագրման եղանակով հստակ հաշվառումը, ինչը թույլ կտա արդյունավետ դարձնել առկա բնակարանային ֆոնդի կառավարումը, պատկերացում ունենալ վթարային շենքերի քանակի, վթարայնության աստիճանի, սեյսմիկ անվտանգության գնահատականի, կապիտալ և ընթացիկ նորոգումների անհրաժեշտության մասին,

- պետական նպատակային ծրագրի մշակումը, որը կներառի առկա շենք-շինությունների տվյալների բազայի ստեղծումը, դրանցից յուրաքանչյուրի վերաբերյալ առանձին ներդրումային առաջարկի փաթեթի ձևավորումը և ֆինանսավորման մեխանիզմը,
- բազմաբնակարանային շենքերի սեփականատիրության կառավարման և պահպանման համակարգի արդիականացումը և համատիրությունների գործառույթների հստակեցումը,
- շինարարական աշխատանքները ժամանակին, ամբողջական ծավալով և որակով իրականացնելու նպատակով քաղաքաշինության ոլորտում ապահովագրական մեխանիզմների ներդրումը, ինչը կապահովի կապալառուների և կառուցապատողների պատասխանատվության աստիճանի բարձրացումը:

3.1.4.4. ՓՄՁ-ին պետական աջակցությունը

Տնտեսության մրցունակության բարձրացման և երկարաժամկետ կայուն տնտեսական աճի ապահովման քաղաքականությունն անհնար է իրագործել՝ առանց տնտեսության ճկունությունն ապահովող ՓՄՁ-ների աջակցության: Տնտեսության մեջ ՓՄՁ-ների դերի բարձրացումը նաև հասարակության միջին խավի ձևավորման, աղքատության հաղթահարման, զբաղվածության ապահովման կարևոր պայման է: Ելնելով նշվածից՝ կառավարությունը շարունակելու է ՓՄՁ-ների համար ոչ միայն նպաստավոր գործարար միջավայրի ստեղծման, այլ նաև ուղղակի աջակցության քաղաքականությունը, մասնավորապես՝

- կառավարությունն ապահովելու է ֆինանսների հասանելիություն գործող և սկսնակ ձեռնարկություններին՝ վարկային երաշխավորությունների տրամադրման միջոցով: Ձեռնարկությունների ֆինանսական ռեսուրսների ապահովման ծրագիրը կենտրոնանալու է մարզերում գրավի ապահովման խնդրի լուծման, ինչպես նաև ռիսկային և արդյունավետ նոր նախաձեռնությունների ֆինանսավորման ուղղությամբ,
- կառավարությունն ապահովելու է ձեռնարկատիրական կրթության մատչելիություն: Այս ծրագրի շրջանակում Հայաստանի բոլոր մարզերում սկսնակ գործարարներն անվճար ձեռք կբերեն

ձեռնարկատիրական հմտություններ: Հատուկ ծրագրեր կիրառվեն կանանց գործարարության զարգացման համար,

- կառավարությունն աջակցելու է գործող և սկսնակ ձեռնարկություններին՝ շուկաների հասանելիություն ապահովելու համար: Այս ծրագրին համապատասխան կշարունակվի աշխատանքը Ձեռնարկությունների եվրոպական ցանցի շրջանակում: Ձեռնարկությունները աջակցություն կստանան ինտերնետային կայքերի, գովազդային վահանակների, ապրանքների փաթեթավորման և բրենդավորման գծով,
- փոքր և միջին առևտրային օբյեկտների շահերի պաշտպանության և մրցակցության նպատակով կառավարությունը սահմանելու է խոշոր առևտրային օբյեկտների տեղակայման չափորոշիչները,
- կառավարությունն ապահովելու է տեղեկատվական աջակցություն փոքր և միջին ձեռնարկություններին: Ինչպես մարզերում, այնպես էլ Երևանում ՓՄՁ-ները իրավական, հարկային, պետական կառավարման տարբեր ոլորտներին և հիմնահարցերին առնչվող խորհրդատվություն և տեղեկատվություն կստանան:

3.1.4.5. Զբոսաշրջությունը

Զբոսաշրջության ոլորտում կառավարության նպատակն է բազմապատկել Հայաստան այցելող զբոսաշրջիկների թիվը: Այդ առումով կառավարությունն իրականացնելու է՝

- ենթակառուցվածքների զարգացում, այդ թվում՝ նաև հյուրանոցային ցանցի ընդլայնում, միջազգային հեղինակավոր բրենդային ցանցերի ներգրավում, զբոսաշրջային տների համակարգի զարգացում,
- զբոսաշրջային գործունեության՝ Երևանից դեպի հանրապետության մարզեր ապակենտրոնացում,
- համայնքներում զբոսաշրջության զարգացում, գյուղական համայնքներում նաև ոչ գյուղատնտեսական աշխատատեղերի ստեղծում,
- համաշխարհային շուկայում Հայաստանի՝ որպես գրավիչ և բա-

ռենպաստ զբոսաշրջային երկրի նկարագրի ձևավորում ու պատշաճ ներկայացում,

- Հայաստանի առանձին զբոսաշրջավայրերի նկարագրերի ձևավորում, բրենդավորում և համաշխարհային ու ներքին շուկայում պատշաճ ներկայացում,
- հայկական զբոսաշրջության մրցունակության բարձրացում՝ բարելավելով ծառայությունների որակը, զարգացնելով մարդկային ռեսուրսներն ու ոլորտն ապահովելով պահանջարկին համապատասխանող կադրերով:

3.1.5. Միջազգային ինտեգրացիան և արտաքին տնտեսական քաղաքականությունը

Այսօր արտաքին շուկաներ դուրս գալու համար գոյություն ունեն տեղեկատվական, ենթակառուցվածքային, կադրային և այլ արգելքներ, որոնց հաղթահարման համար անհրաժեշտ է օգտագործել արտաքին առևտրի կարգավորման հնարավոր բոլոր միջոցները, արտաքին աշխարհի տնտեսություններին ինտեգրման բոլոր հնարավորությունները, որոնք թույլ կտան մեր արտադրողներին ունենալ մասշտաբի էֆեկտը:

Կառավարությունը՝

- կշարունակի ակտիվ համագործակցությունը ԱՊՀ անդամ գործընկեր երկրների հետ, միջոցներ կձեռնարկի ԱՊՀ մի շարք անդամ երկրների հետ ստորագրված բազմակողմ ազատ առևտրի գոտու ստեղծման մասին համաձայնագրի կիրարկման ուղղությամբ,
- կշարունակի ԵՎՐԱԶԵՍ-ի հետ համագործակցությունը՝ ապահովելով տնտեսական ինտեգրման ավելի բարձր մակարդակ,
- կակտիվացնի եվրոպական ինտեգրման ողղությամբ ընթացող աշխատանքը, մասնավորապես, կշարունակվեն ակտիվորեն իրականացվել Գործընկերության և համագործակցության համաձայնագրի դրույթները,
- ավարտին կհասցնի Եվրամիության հետ Ասոցացման համաձայնագրի՝ այդ թվում՝ խոր և համապարփակ ազատ առևտրի գոտու ստեղծման շուրջ բանակցությունը,

- կշարունակի միջազգային տնտեսական համագործակցության համար համապատասխան իրավապայմանագրային դաշտի ստեղծման, Հայաստանի միջազգային հեղինակության բարձրացման ու ամրապնդման, ինչպես նաև դեպի ծով ելք չունեցող երկրների համար տարանցիկ փոխադրման համագործակցության մասով նոր գլոբալ համակարգերին ինտեգրման աշխատանքները:

3.1.6. Տարածքային համաչափ զարգացումը

Տարածքային զարգացման անհամաչափության հաղթահարումը կարևոր է երկրի ներուժն առավելագույնս արդյունավետ օգտագործելու, ինչպես նաև երկրի կայուն ու անվտանգ առաջընթացի համար: Կառավարության գործողություններն այս ոլորտում իրականացվելու են հետևյալ ուղղություններով.

- իրականացվելու է Երևանի բեռնաթափման համալիր ծրագիրը՝ պետական, կրթական, մշակութային ու տնտեսական առանձին գործառույթներ տեղափոխելով հանրապետության մյուս տարածքներ, բարձրացնելով այլ քաղաքների դերակատարությունը հանրային գործընթացներում,
- պետական աջակցության տարբեր ձևերի կիրառմամբ, պետական-մասնավոր համագործակցությամբ, նպատակային ծրագրերի մշակմամբ և իրագործմամբ խրախուսվելու են Հայաստանի քաղաքների զարգացման տեմպերի արագացումը և ներդրումային ակտիվությունը,
- կառավարությունը նպաստելու է համայնքներում մրցակցային առավելությունների վրա հիմնված տնտեսական զարգացման տարբեր մոդելների ներդրմանը,
- սահմանամերձ և սոցիալապես խոցելի համայնքների համար իրականացվելու են հատուկ օժանդակության ծրագրեր:

3.1.7. Ենթակառուցվածքները

Երկրի մրցունակության բարձրացումը պահանջում է ենթակառուցվածքներում ներդրումների շարունակական իրականացում: Կառավարու-

թյունը նպատակ է դնում տնտեսական աճին միտված և պետական-մասնավոր սերտ գործընկերության վրա հիմնված ենթակառուցվածքների զարգացումը:

3.1.7.1. Էներգետիկան

Էներգետիկայի ոլորտում կառավարության իրականացրած քաղաքականությունը թույլ տվեց գազի գնի աճի պայմաններում պահպանել էլեկտրաէներգիայի գործող սակագները, ինչպես նաև զարգացնել համակարգը: Կառավարությունը շարունակելու է՝

- բարձրացնել էներգետիկ անվտանգության մակարդակը,
- վարել էներգիայի վերականգնվող աղբյուրների և այլընտրանքային էներգետիկայի նպատակային զարգացմանը միտված քաղաքականություն, այդ թվում՝ իրականացնելով առկա հիդրոներուժի օգտագործման արդյունավետության բարձրացումը և էներգիայի այլընտրանքային աղբյուրների ստեղծմանն ուղղված գիտական և ինժեներատեխնիկական հետազոտություններ,
- հետևողականորեն վերազինել համակարգը՝ էներգասպառողներին զերծ պահել անկայուն և խափանվող, լարման տատանումներից,
- հետամուտ լինել տարածաշրջանային էներգահամակարգին ինտեգրմանը՝ ավարտին հասցնելով Իրան-Հայաստան և Վրաստան-Հայաստան 400 ԿՎ լարման էլեկտրահաղորդման օդային գիծը:

Կառավարությունը շարունակելու է նաև Հայկական ատոմային էլեկտրակայանի նոր էներգաբլոկի կառուցման ուղղությամբ կատարվող աշխատանքները:

3.1.7.2. Ջրամատակարարումը

Ջրամատակարարման և ջրահեռացման բնագավառում կառավարությունը հավատարիմ է մնալու մատակարարվող ջրի որակի բարելավման, կայուն ջրամատակարարման, ջրի կորստի կրճատման, ինչպես նաև շուրջօրյա ջրամատակարարման աստիճանական ապահովման քաղաքականությանը:

Ոռոգման ջրի բնագավառում բարեփոխման երկարաժամկետ ծրագրի իրականացումը բարձրացնելու է համակարգի շահագործման հուսալիությունը, արդյունավետությունը և տրամադրվող պետական օժանդակության հասցեականությունը:

Կառավարությունը ջրային տնտեսության կառավարման բարեփոխման խորացումը տեսնում է համակարգի կառավարման մեջ պետությունմասնավոր հատված համագործակցության ուժեղացման շրջանակում:

Կառավարությունը նախատեսում է՝

- գյուղական բնակավայրերում ջրամատակարարման և ոռոգման ներդրումային ծրագրերի իրականացում,
- ջրամբարների շինարարություն, առկա ենթակառուցվածքների արդիականացում՝ հիմնականում երկկողմ և բազմակողմ դոնորական աջակցության շրջանակում: Առանցքային հիդրոտեխնիկական կառուցվածքների պատշաճ պահպանման, նորոգման և ամրապնդման աշխատանքների իրականացումը, որով կապահովվի այդ կառուցվածքների անվտանգ ու անխափան շահագործումը,
- համակարգում առկա և նոր գործարկվող հզորությունների պատշաճ շահագործումն ու պահպանումը:

3.1.7.3. Տրանսպորտային ենթակառուցվածքները

Տրանսպորտի կայուն և արդյունավետ զարգացումը դիտարկվում է որպես երկրի տնտեսական աճի բարձր տեմպի, ազգային անվտանգության և պաշտպանունակության ապահովման, բնակչության կենսապայմանների բարձրացման, ինչպես նաև համաշխարհային տնտեսությանը Հայաստանի ինտեգրման և մրցունակության անհրաժեշտ պայման:

Առաջնահերթություն կտրվի ճանապարհային ցանցի առավել ինտենսիվ, ինչպես նաև կենսական նշանակություն ունեցող հատվածներում իրականացվող ներդրումներին: Այսպես՝

- կմեկնարկի միջազգային չափանիշներին համապատասխան «Հյուսիս-հարավ» առաջին արագընթաց ճանապարհի կառուցումը, որը կունենա տարածաշրջանային նշանակություն,

- կշարունակվի աշխատանքը Հայաստան-Իրան երկաթգծի կառուցման ծրագրի ուղղությամբ,
- նոր թափ կհաղորդվի Երևանի ավտոճանապարհների և հանգույցների շինարարությանը, ինչի արդյունքում կթեթևանա Երևան քաղաքի տրանսպորտային ծանրաբեռնվածությունը: Այլ քաղաքներում ևս ավելացվելու է ճանապարհային ենթակառուցվածքների բարելավման ծրագրերի իրականացման տեմպը,
- ավելացվելու է գյուղական համայնքներն սպասարկող ճանապարհներին ուղղվող պետական ներդրումների ծավալը,
- նորացվելու և արդիականացվելու է հասարակական տրանսպորտը: Հիմնովին վերափոխվելու է միջքաղաքային ու ներքաղաքային տրանսպորտի կառավարման համակարգը, որը կմեծացնի նաև սոցիալական ծառայությունների հասանելիությունը և աշխատուժի շարժունակությունը, այդ թվում՝ նաև հաշմանդամների և այլ սակավաշարժուն խմբերի համար:

3.1.7.4. Հեռահաղորդակցությունը

Հեռահաղորդակցության ոլորտում կառավարությունը նպաստելու է ծառայությունների աշխարհագրության ընդլայնմանն ու նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ առաջարկվող ծառայությունների բազմազանությանը և միջազգային չափանիշներին համապատասխան բարձր որակի ապահովմանը: Այս նպատակների իրականացման առումով կառավարությունն ապահովելու է բնակչության առնվազն 60 տոկոսի կողմից համակարգիչների միջոցով համացանցի օգտագործման հնարավորությունը:

Կառավարությունը շարունակելու է Հայաստանի Հանրապետության տարածքում ռադիոհաղորդումների և հեռուստահաղորդումների հեռարձակման թվայնացման քաղաքականությունը: Հեռահաղորդակցության ու փոստային կապի ոլորտներում որակյալ ծառայություններ մատուցելու համար ներդրվելու են միջազգային լավագույն չափորոշիչներ:

3.2. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Սոցիալական քաղաքականության առանցքում դրվելու է մարդկային կապիտալի զարգացումը՝ միտված Հայաստանի քաղաքացիների ներուժի լիարժեք և ամբողջական դրսևորմանը:

3.2.1. Սոցիալական քաղաքականությունը

Սոցիալական քաղաքականության մեջ կառավարության կողմից իրականացվող փոփոխությունը միտված է լինելու անհավասարություն ծնող պատճառների վերացմանը: Առաջին հերթին դա նշանակում է աշխատունակ խոցելի խավերի համար հասանելի դարձնել կրթությունը և աշխատանքը: Միաժամանակ, կառավարությունն իրականացնելու է համապարփակ սոցիալական քաղաքականություն, որի ներքո՝

- ստեղծելու է սոցիալական ծառայությունների տրամադրման ինտեգրված համակարգ, որի նպատակն է լինելու կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց (ընտանիքներին)՝ ըստ կարիքի՝ դրան համարժեք սոցիալական համալիր ծառայությունների տրամադրումը «Մեկ պատուհան» սկզբունքի միջոցով,
- յուրաքանչյուր քաղաքացու համար դյուրացնելու է սոցիալական ծառայության ստացումը և բարձրացնելու է դրա մատչելիությունը՝ անկախ իր բնակության վայրում գտնվելու հանգամանքից,
- միայնակ տարեցների և խնամքի կարիք ունեցող հաշմանդամների համար իրականացնելու է խնամքի, սպասարկման, խորհրդատվության, իրավաբանական օգնության տրամադրման ծրագրեր՝ սոցիալական աշխատողի ինստիտուտի ներդրման միջոցով,
- շարունակելու է իր ջանքերը՝ սահմանափակ հնարավորությամբ անձանց համար լիարժեք կյանքով ապրելու պայմաններ և հնարավորություն ստեղծելու ուղղությամբ,

- շարունակելու է ԽՍՀՄ խնայբանկում մինչև 1993 թվականը ներդրված ավանդների դիմաց փոխհատուցման տրամադրման ծրագրի իրականացումը՝ ըստ տարիքային հերթականության,
- սկսելու է կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման գործընթացը, որը երաշխավորելու է ապահով և արժանապատիվ ծերություն: Քաղաքացիների կենսաթոշակային-կուտակային հաշիվների միջոցները պետության կողմից կրկնապատկվելու են՝ խրախուսելով խնայողության առաջացումը և կրճատելով աշխատավարձի վճարման գործում առկա ստվերայնությունը,
- մշակելու և ընդունելու է սոցիալական բնակարանաշինության զարգացման ծրագիր, որը կնախատեսի նաև վարձակալական հիմունքով բնակարանների տրամադրում սոցիալապես անապահով խավերին,
- հետևողականորեն շարունակելու է կենսաթոշակի բարձրացման քաղաքականությունը,
- պետություն-մասնավոր, այդ թվում՝ առևտրային բանկերի հետ համագործակցությամբ սոցիալապես խոցելի խավերին մատուցելու է լրացուցիչ սոցիալական ծառայություններ:

3.2.2. Առողջապահությունը

Ոլորտում իրականացվող բարեփոխումը շարունակելու է շեշտադրել առողջապահական ծառայությունների մատչելիությունը, հասանելիությունն ու որակի բարձրացումը: Միաժամանակ, առողջապահության ոլորտում կառավարության քաղաքականության փոփոխությունն ուղղված է լինելու հիվանդությունների կանխարգելմանը՝ առողջ կենսակերպի համար պայմաններ ստեղծելու միջոցով: Սպորտի մասսայականացման, առողջ և անվտանգ սննդի երաշխավորման, ծխելու դեմ պայքարի հարցերը մշտապես լինելու են պետության օրակարգում: Այս առումով կառավարությունը

- ապահովելու է հիվանդությունների ճշգրիտ և վաղ ախտորոշումը, որակյալ բուժումը, ինչպես նաև հետվիրահատական վերականգնողական շրջանի գրագետ վարումը,
- հետևողականորեն իրականացնելու է բժիշկների պարտադիր վերապատրաստում, այդ թվում՝ աշխարհի լավագույն առողջապահական կենտրոններում,

- երաշխավորելու է սրտի անհետաձգելի վիրահատությունը՝ Հայաստանի բոլոր քաղաքացիների համար,
- կառուցելու է եվրոպական լավագույն չափանիշներին համապատասխան արյունաբանության հիվանդանոց,
- հիմնելու է ուռուցքաբանական կենտրոն, որը կընձեռի ժամանակակից գիտական մեթոդներով նորագոյացությունների հայտնաբերման, ախտորոշման և որակյալ բուժման հնարավորություն,
- շարունակելու է մարզային բժշկական հաստատությունները վերակառուցելու և վերազինելու ծրագրի իրականացումը՝ հանրապետության ամբողջ տարածքում հասանելի դարձնելով ժամանակակից բժշկական ծառայությունները,
- շարունակելու է հատուկ ուշադրություն դարձնել ոլորտի հաստատությունների նորագույն սարքավորումներով վերազինմանը,
- հատուկ կարևորելու է բնակչության անապահով և սոցիալապես առավել խոցելի խմբերի համար բժշկական ծառայությունների մատչելիության բարձրացման խնդիրը՝ նրանց համար հիվանդությունների հիմնական խմբերի գծով ապահովելով կանխարգելիչ, ախտորոշիչ և բժշկական օգնության ծառայությունների հնարավորինս լայն շրջանակ,
- պետպատվերի շրջանակում որոշ հիվանդությունների տեսակների և սոցիալապես անապահով խավերի համար աստիճանաբար ներդնելու է բժշկական ապահովագրության ինստիտուտը,
- շարունակելու է հատուկ ուշադրություն դարձնել դեղերի բնագավառում իրականացվող քաղաքականությանը, բժշկական կրթական համակարգի բարեփոխմանը և առողջապահության համակարգում անհրաժեշտ տեղեկատվական բազաների ստեղծմանն ու ֆինանսավորման մեխանիզմների կատարելագործմանը:

3.2.3. Կրթությունը և գիտությունը

Մրցունակ պետություն նշանակում է մրցունակ կրթական և գիտական համակարգ, որը պետք է ապահովի ոչ միայն գիտելիքի հաղորդումը, այլև գիտելիքի հետ աշխատելու ունակությունը: Ըստ այդմ՝

- բուհերը պետք է դառնան ժամանակակից հասարակության հեն-

քը՝ միավորելով գիտությունը, դասավանդումը և նորարարական արտադրությունը,

- երաշխավորված նվազագույն իննամյա կրթությունից անցում պետք է կատարվի երաշխավորված անվճար տասներկուամյա (ներառյալ մասնագիտական) կրթությանը,
- կրթությունը հասանելի դարձնելու նպատակով անվճար կրթություն է ապահովվելու սոցիալապես անապահով խավերի համար (ներառյալ բարձրագույն կրթությունը),
- յուրաքանչյուր առաջին դասարանի աշակերտին անվճար տրամադրվելու է համակարգիչ,
- ընդլայնվելու է նախադպրոցական կրթության հասանելիությունը,
- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող խոցելի բոլոր խմբերի երեխաներին ընձեռվելու է որակյալ հիմնական կրթություն ստանալու հնարավորություն,
- ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար ընդլայնվելու է որակյալ հիմնական կրթություն ստանալու հնարավորությունը,
- բարելավվելու է դասագրքերի և ուսուցչական ձեռնարկների բովանդակային որակը,
- ներդրվելու են կրթության արդյունքային ցուցանիշների վրա հիմնված ֆինանսավորման և արդյունավետության գնահատման գործիքներ,
- դպրոցներում ապահովվելու է ինտերնետի ամբողջական և որակյալ ծածկույթ,
- վերանայվելու է ընդունելության քննությունների համակարգը՝ հեշտացնելով դիմորդների մուտքը բուհ, սակայն խստացվելու են առաջադիմության և ավարտական հմտություններին վերաբերող պահանջները,
- հավատարմագրման եվրոպական համակարգին միանալու միջոցով ստեղծվելու է Հայաստանում շնորհված կրթական որակավորման միջազգային լիարժեք ճանաչման հնարավորություն,
- եռապատկվելու է հայալեզու էլեկտրոնային կրթական ռեսուրսների ծավալը,

- բուհերում սահմանվելու է ուսման վարձի վերին շեմ,
- Բոլոնիայի համաձայնագրին համապատասխան մեծացվելու է բուհերի ինքնուրույնությունը,
- բարձրագույն տեխնոլոգիական կրթության ոլորտում, համագործակցելով միջազգային կազմակերպությունների հետ, հիմնվելու է ժամանակակից լաբորատորիաների ցանց,
- էապես բարելավվելու է հանրակացարանային ցանցը՝ եվրոպական համալսարանական ավանների ձևաչափով,
- բուհերում ուժեղացվելու է գիտահետազոտական բաղադրիչը, ներդրվելու են գիտության ֆինանսավորման ժամանակակից մեթոդներ, առաջնային ուշադրություն է դարձվելու հայագիտության զարգացմանն ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում,
- համալսարանների և գիտատեխնիկական լաբորատորիաների հետ համատեղ շարունակվելու են պետական ներդրումները նորարարության և հետազոտության համար ժամանակակից ենթակառուցվածքների ստեղծման նպատակով:

3.2.4. Բնապահպանությունը

Բնապահպանական և տնտեսական օգուտի ու վնասի հետազոտման միջոցով հավասարակշռված բնապահպանական միջավայրի ապահովումը, մարդու առողջության պահպանումը և կյանքի որակի բարձրացումը բնապահպանության ոլորտում կառավարության քաղաքականության առանցքն են: Այս նպատակով նախատեսվում է՝

- շարունակել ուժեղացնել պետության վերահսկողությունը շրջակա միջավայրի պահպանման նկատմամբ՝ օդի, ջրի որակի, կանաչ տարածքների, աղբամշակման բարձր չափանիշների սահմանմամբ,
- հիմնանորոգել կեղտաջրի կենսաբանական մաքրման կայանները և կառուցել նորերը,
- շարունակել Սևանա լճի էկոլոգիական հավասարակշռության վերականգնման և պահպանության միջոցառումների իրականացումը,

- ապահովել անտառապատման և անտառվերականգնման ծավալի հետագա աճը, անտառի ապօրինի հատման կանխումը, անապատացման դեմ պայքարը, կենսաբանական և լանդշաֆտային բազմազանության պահպանումը, ավտոտրանսպորտից վնասակար նյութերի արտանետման նվազեցումը, ջրի և անտառի ազգային ծրագրերի ամբողջական իրականացումը,
- ընդլայնել բնության հատուկ պահպանվող տարածքների համակարգը և կատարելագործել դրանց կառավարման մեխանիզմները,
- մշակել և կիրառել նոր մոտեցումներ հասարակության բնապահպանական իրազեկության բարձրացման և էկոլոգիական կրթության ու դաստիարակության հարցերում,
- ուժեղացնել ընդերքի շահագործման, ինչպես նաև բնական պաշարների վերականգնման ու վերարտադրության նկատմամբ վերահսկողությունը,
- մշտապես ուշադրության կենտրոնում պահել բնական միջավայրի ռադիոակտիվ աղտոտման կանխարգելումը, վտանգավոր քիմիական ու ռադիոակտիվ նյութերի և թափոնների կառավարումը, բնական և մարդածին ազդեցությունների կանխատեսման համակարգի զարգացումը,
- բնապահպանական տեսակետից նախընտրելի տեխնոլոգիաների և ծրագրերի ֆինանսավորման նորարարական, բնապահպանության ոլորտում կառավարման կատարելագործման նպատակով շարունակել զարգացնել մասնավոր ու հանրային հատվածների համագործակցության մեխանիզմները և ներդնել նորերը:

3.2.5. Մշակույթը

Մշակութային քաղաքականության փոփոխությունն ուղղված է լինելու այնպիսի տիպարների ձևավորմանն ու լայն ներկայացմանը, որոնք հասարակությանը օգնելու են հանրային ուղեցույց դարձնել բարոյական չափանիշները, հայրենասիրությունը, համերաշխությունը, աշխատանքին և սեփական ուժերին ապավինումը, փոխադարձ վստահությունը: Այդ նպատակով՝

- ստեղծվելու են հայ հոգևոր ու մշակութային ժառանգության պահպանման, ազգային արժեքների և ավանդույթների վերարտադրության, զարգացման ու հանրահռչակման նպաստավոր պայմաններ,
- պետական պատվերի տեղադրումը նպաստելու է երաժշտության, ֆիլմերի, թատերական ներկայացումների, հեռուստահաղորդումների, գրքերի միջոցով ազգային և համամարդկային արժեքների տարածմանը: Առանձնահատուկ ուշադրության են արժանանալու դեբյուտային ծրագրերը,
- ծրագրվում է ազգային երգ ու պարի դասավանդում դպրոցում, ինչպես նաև ազգային ավանդույթների ու մշակույթի դասընթացների ներմուծում կրթական ծրագրերում,
- կատարելագործվելու է պրոֆեսիոնալ մասնագետների պատրաստման համակարգը, կիրառվելու է արտերկրից հրավիրյալ մասնագետների դասախոսությունների ու վարպետության դասընթացների միջոցով համաշխարհային մշակութային կյանքի նորարարության ու զարգացումների հետ ծանոթացման մեխանիզմ: Ապահովվելու է մշակութային կրթության փուլերի շարունակականությունը,
- ապահովվելու է մշակութային ծառայությունների մատչելիությունը, հասանելիությունը, բազմազանությունը, համաչափությունը հանրապետության ամբողջ տարածքում,
- լայնորեն տարածվելու է շարժական մշակույթի կիրառումը, ինչը կօգնի մայրաքաղաքային մշակույթի մուտքը մարզեր (շարժական կինոթատրոն, գրադարան, թանգարան, գրախանութ),
- ստեղծվելու է ազգային փոքրամասնությունների մշակույթի լիարժեք դրսևորման լրացուցիչ հնարավորություն,
- կառավարությունն ակտիվորեն համագործակցելու է Հայ Առաքելական եկեղեցու հետ՝ հայ ընտանիքի բարոյական նորմերի պահպանման, մատաղ սերնդին անցանկալի ազդեցություններից զերծ պահելու և հայեցի դաստիարակություն տալու նպատակով,
- ամրապնդվելու է մշակույթի ոլորտի աշխատողների սոցիալական պաշտպանվածությունը,

- մշակույթի ոլորտում ներդրվելու են տեղեկատվական հեռահաղորդակցական նոր տեխնոլոգիաներ,
- զարգացվելու են մշակութային ժամանակակից ենթակառույցները՝ հայ արվեստի համար ստեղծելով միջազգային ասպարեզում ըստ արժանվույն գնահատվելու հնարավորություն և համաշխարհային մշակութային գործընթացներին ակտիվ մասնակցություն,
- աշխուժացվելու է մանկապատանեկան մշակութային կյանքը: Ապահովվելու է մանուկների ու երեխաների գեղարվեստական կրթությունն ու գեղագիտական դաստիարակությունը,
- խթանվելու է ստեղծագործական արդյունաբերությունը (հուշանվերների պատրաստում, ազգային խոհանոցի տարածում, ազգային տարազի կիրառում, կիրառական արվեստի ձյուղերի զարգացում և տարածում):

3.2.6. Ժողովրդագրությունը, երիտասարդությունը և սպորտը

3.2.6.1. Ժողովրդագրությունը

Ժողովրդագրական քաղաքականության ռազմավարական նպատակներն են՝ Հայաստանում կանխել հասարակության ծերացման միտումը, կանխարգելել երիտասարդների արտահոսքը երկրից, խթանել առողջ սերնդի վերարտադրությունը, սատարել այն երիտասարդներին, ովքեր պատրաստ են վերադառնալ հայրենիք:

Ժողովրդագրական իրավիճակի բարելավման ուղղությամբ իրականացվող ծրագրերը կառուցվելու են երեք կարևորագույն հենքերի վրա՝

- երիտասարդ ընտանիքներին աջակցություն,
- ծնելիության խթանում,
- երեխաների առողջություն:

Նրանք, ովքեր նոր են ամուսնացել, ստանալու են արտոնյալ վարկեր՝ բնակարան ձեռք բերելու համար, նրանք, ովքեր արդեն ունեն երկու երեխա՝ ստանալու են 1 մլն դրամ՝ երրորդ և չորրորդ երեխայի և 1.5 մլն դրամ՝ 5-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծնվելու կապակցությամբ: Նրանք, ովքեր ունեն մինչև 10 տարեկան երեխա, ստանալու են բոլոր տեսակի առողջապահական ծառայությունները, այդ թվում՝ երեխայի հիվանդանոցային բուժումն անվճար ապահովելու հավաստագրեր:

3.2.6.2. Երիտասարդությունը

Երիտասարդության համար կառավարության կողմից քայլեր կձեռնարկվեն ստեղծելու սոցիալ-տնտեսական, իրավական, քաղաքական, հոգևոր, մշակութային, կազմակերպական պայմաններ ու երաշխիքներ՝ նրանց սոցիալական կայացման և ստեղծագործ ներուժն ի շահ հասարակության լիարժեք օգտագործելու համար:

Կառավարությունը մատչելի բնակարանային ֆոնդի ազգային ծրագրի շրջանակում ավելացնելու է «Մատչելի բնակարան» և «Բնակարան երիտասարդ ընտանիքներին» ծրագրերի ծավալները: Երիտասարդների համար ներդրվելու են պետության կողմից սուբսիդավորվող ֆինանսական նոր գործիքներ:

3.2.6.3. Սպորտը

Կառավարությունը ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում իրականացվող քաղաքականության նպատակներն է համարում՝

- բնակչության առողջության ամրապնդումը,
- անհատի ներդաշնակ զարգացման, աշխատունակության ու երկարակեցության ապահովմանն ուղղված պայմանների ստեղծումը,
- տարիքային և սոցիալական տարբեր խմբերի անձանց համար ֆիզիկական դաստիարակության անընդհատությունն ու ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու մատչելիությունը,
- հայրենիքի պաշտպանությանը պատրաստ երիտասարդության ֆիզիկական պատրաստվածության ապահովումը,
- բարձրակարգ մարզիկների պատրաստումը, միջազգային մրցասպարեզներում Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի ու մարզիկների արդյունավետ մասնակցության ապահովումը,
- մանկապատանեկան մարզադպրոցների աշխատակազմի սոցիալական վիճակի բարելավումը,
- զանգվածային, հանրապետական և մարզային միջոցառումների անցկացումը,
- հաշմանդամային սպորտին, մարզական–հասարակական կազմակերպություններին պետական աջակցությունը:

3.3. ԻՆՍՏԻՏՈՒՏԻՈՆԱԼ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հասարակության զարգացման հիմնարար գործոններից մեկն արդյունավետ ինստիտուտների, դրանց քաղաքական, տնտեսական, սոցիալական հարաբերությունները կարգավորող համակարգի առկայությունն է: Ինստիտուտներն ազդում են ֆիզիկական, մարդկային կապիտալում և տեխնոլոգիաներում ներդրումների արդյունավետ տեղաբաշխման, առկա ռեսուրսների արդյունավետ օգտագործման, հետևաբար տնտեսական ներուժի առավելագույնս օգտագործման և աճի վրա: Այս ոլորտի բարեփոխումը պետք է ուղղվի այնպիսի ինստիտուտների կայացմանը, որոնք ապահովում են հավասարապես բոլորի համար գործող արդար խաղի կանոններ և լրացուցիչ ծախս չեն առաջացնում տնտեսության մասնակիցների համար: Արդյունավետ ինստիտուտները ստեղծում են մարդկանց կարողությունների լիարժեք իրագործման խթաններ: Այս ոլորտի բարեփոխումը կարևորվում է նաև այն հանգամանքով, որ ինստիտուտները ոչ միայն ուրվագծում են տնտեսության աճի ներուժը, այլև պայմանավորում են տարբեր անձանց և սոցիալական խմբերի միջև տնտեսական օգուտի արդար բաշխումը:

3.3.1. Պետական կառավարումը և տեղական ինքնակառավարումը

3.3.1.1. Կառավարման համակարգի բարեփոխումը և կոռուպցիայի դեմ պայքարը

Պետական կառավարման ոլորտում վարչարարության արդյունավետության բարձրացմանը զուգահեռ անցում է կատարվելու հսկողական գործառույթներից դեպի անձանց՝ որակյալ մրցունակ պետական ծառայություններ մատուցելուն: Ժամանակն է, որ մատուցվեն մասնավոր ծառայություններին համադրելի որակով պետական ծառայություններ: Միաժամանակ, կառավարությունը շարունակելու է միջոցառումներ իրականացնել հակակոռուպցիոն ռազմավարության կիրարկման և կոռուպ-

ցիայի դեմ պայքարի կարողությունները մեծացնելու ուղղությամբ, առանց որի երկրի ինստիտուցիոնալ կայացումը վտանգված է: Այս համատեքստում կառավարությունը նախատեսում է՝

- սահմանել պետական կառավարման համակարգի բոլոր ճյուղերում պաշտոնյաների վարձատրության միասնական և արդարացի համակարգ, որը հաշվի կառնի յուրաքանչյուր աշխատողի արտադրողականությունը և աշխատանքի արդյունավետությունը,
- պետական աշխատանքը գրավիչ դարձնելու նպատակով շարունակել սոցիալական երաշխիքների ներդրման քաղաքականությունը,
- հստակեցնել պետական կառավարման մարմինների գործառույթները: Մասնավորին պատվիրակել գործակալական, սպասարկման կամ մասնագիտական այն ծառայությունները, որոնք առավել արդյունավետ կարող են իրականացվել մասնավորի կողմից,
- վերացնել այն գործառույթները, որոնք ստեղծում են բյուրոկրատական անհարմարություն ու քաշքշուկ՝ բիզնեսի և քաղաքացիների համար: Ուժեղացնելով պետության կարգավորիչ դերը խաղի կանոնների սահմանման առումով՝ նվազագույնի հասցնել միջամտությունը տնտեսավարողի գործերին,
- ավարտել կենսաչափական կողմնորոշիչ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման քարտերի համակարգի ներդրումը, ինչը կդյուրացնի բոլոր քաղաքացիների համար հանրապետության ամբողջ տարածքում էլեկտրոնային ծառայություններից օգտվելը,
- շարունակել էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրման աշխատանքը՝ առաջնահերթ համարելով այն ոլորտները, որտեղ դրանց կիրառումն առավել արդյունավետ է բնակչության և գործարարների կողմից ժամանակային ծախսերի կրճատման, կառավարման թափանցիկության ու վերահսկելիության ավելացման առումով,
- հանրությանը մատուցվող արդարադատության ոլորտի ծառայությունների մատչելիությունը բարձրացնելու համար գալիք հինգ

տարիների ընթացքում ապահովել միասնական սպասարկման կենտրոնների միջոցով կամ առցանց «Մեկ կանգառ» սկզբունքով արդարադատության ոլորտի ծառայությունների գերակշիռ մասի տրամադրում պետության կողմից,

- ուժեղացնել էթիկայի հանձնաժողովի դերը, օրենսդրության մեջ վերացնել այն դրույթները, որոնք ստեղծում են կոռուպցիոն ռիսկերի դրսևորման բարենպաստ միջավայր,
- ներդնել բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի, եկամտի հայտարարագրերը հանրությանը հասանելի դարձնելու մեխանիզմներ,
- ստեղծել քաղաքացի-գործադիր իշխանություն հարաբերություններում մարդկանց սահմանադրական իրավունքները հարգելու և ապահովելու անհրաժեշտ երաշխիքներ,
- ապահովել հակակոռուպցիոն ռազմավարության շրջանակում միջազգային կառույցների հետ ակտիվ համագործակցությունը,
- կատարել բիզնեսը և քաղաքականությունը սահմանազատելու, պետական կառավարման ապարատը բիզնեսից տարանջատելու գործուն քայլեր:

3.3.1.2. Տեղական ինքնակառավարումը

Տեղական ինքնակառավարման համակարգի բարելավումը միտված է զարգացնել պետության բոլոր մակարդակներում արդյունավետ կառավարման ներուժը: Ըստ այդմ կառավարությունը նախատեսում է՝

- ապահովել տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների և ֆինանսական ռեսուրսների միջև համապատասխանությունը՝ հետևողականորեն ավելացնելով համայնքների ինքնակազմակերպման հնարավորությունները,
- ավելացնել տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների տեսականին՝ միաժամանակ բարձրացնելով դրանց որակը բոլոր համայնքներում,
- ստեղծել դեպի համայնքներ ներդրումների հոսքի և համայնքներում նոր աշխատատեղերի ստեղծման խթաններ,
- ապահովել համայնքի ղեկավարի կողմից ընդունվող որոշումնե-

րի ու գործունեության արդյունավետ վերահսկողության մեխանիզմներ,

- բարձրացնել տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկությունը,
- իրականացնել համատիրությունների լիարժեք կայացման ռազմավարություն,
- բնակչությանը մրցակցային սկզբունքով կոմունալ ծառայությունների մատուցման և որակի բարձրացման ուղղությամբ մշակել և իրականացնել պիլոտային ծրագրեր,
- համայնքներում առկա կարողությունների ավելացման և արդյունավետ օգտագործման նպատակով խրախուսել միջհամայնքային միավորումների ձևավորումը, համայնքների խոշորացումը և համայնքային նախաձեռնությունների իրականացումը,
- իրականացնել հատուկ օժանդակության ծրագրեր՝ սահմանամերձ և սահմանափակ ռեսուրս ու կարողություն ունեցող համայնքների համար,
- Երևանին վերադարձնել իր ձարտարապետական շունչը՝ օրենքով բացառելով Երևանի կենտրոնում մայրաքաղաքային պատմությանն ու նկարագրին անհարիր կառուցապատումը:

3.3.2. Հարկային և մաքսային համակարգերը

Հարկային և մաքսային համակարգերը պետք է գործեն՝ ելնելով արդարության սկզբունքից, համապատասխան կարողություն ունենան ստվերային տնտեսության կրճատման համար և լինեն միջազգայնորեն մրցունակ՝ նպաստելով բիզնես միջավայրի բարելավմանը: Այս առումով հարկային և մաքսային համակարգերի կատարելագործման կարևոր ուղղություններ են լինելու՝

- հարկեր/ՀՆԱ հարաբերակցության տարեցտարի ավելացման շարունակումը՝ հատկապես տնտեսական գործունեության ստվերային և ոչ ֆորմալ հատվածի կրճատման միջոցով,
- փոքր ու միջին բիզնեսի համար պարզեցված հարկային դաշտի ապահովումը և հարկային բեռի շարունակաբար տեղափոխումը դեպի խոշոր հարկատուներ,

- հարկային վարչարարության պարզեցումը, մասնավորապես բոլոր տեսակի հարկային հաշվետվությունները, տեղեկություններն ու դիմումներն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու հնարավորության ընձեռումը,
- մաքսային արժեքի որոշման և մաքսազերծման գործընթացի համապատասխանեցումը եվրոպական չափանիշներին: Միաժամանակ, բարձրացվելու է ապրանքների հետբացթողումային վերահսկողության արդյունավետությունը, ինչին կնպաստի նաև առավել սերտ համագործակցությունն այլ երկրների մաքսային մարմինների հետ,
- հարկային և մաքսային ծառայություններում աշխատողների սեփական բիզնես շահերի բացառումը, բոլորի համար հավասար դաշտի երաշխավորումը,
- հարկ վճարողների շահերի պաշտպանությունը և նրանց սպասարկման որակի բարձրացումը, որով հարկման հարաբերություններում կընդլայնվեն ինքնագնահատման համակարգի կիրառման մոտեցումները,
- սահմանային անցակետերի, առաջին հերթին մաքսային տեղամասերի ժամանակակից պահանջներին համապատասխան արդիականացումը,
- հարկային և մաքսային մարմինների տեխնիկական ապահովվածության մակարդակի, ինչպես նաև այդ մարմինների միջև տեղեկատվության փոխանակման մեխանիզմների բարելավումը՝ ստեղծելով տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ արդյունավետ հսկողության իրականացման գործուն տեղեկատվական համակարգ:

3.3.3. Մրցակցության պաշտպանության համակարգը

Գործարար կարողությունների ազատ դրսևորումն ու ներդրումների աճն անհնար են առանց արդար մրցակցային դաշտի առկայության: Հայաստանի Հանրապետությունում գերիշխող դիրքը պարբերաբար չարաշահող խոշոր բիզնեսի կողմից մրցակցության խաթարումը տնտեսության կայուն աճի խոչընդոտներից է: Առանց մրցակցության ոլորտի արմատա-

կան վերափոխման անհնար է կառավարության տնտեսական ծրագրի արդյունավետ իրագործումը: Այս առումով կառավարությունը նախատեսում է՝

- էապես ուժեղացնել տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովի իրավասություններն ու գործիքակազմը՝ հիմնվելով միջազգային լավագույն փորձի վրա:
- իրականացնել մենաշնորհային և գերիշխող դիրք ունեցող տնտեսավարողների գործունեության նկատմամբ հսկողություն և չարաշահումների կանխարգելում՝ անպատիժ չթողնելով ոչ մի հակամրցակցային գործողություն,
- վերացնել շուկա մուտք գործելու խոչընդոտներն ինչպես ներքին արտադրողի, այնպես էլ ներմուծողի համար՝ ապահովելով հավասար մրցակցային պայմաններ բոլորի համար,
- հայտնաբերել և կանխարգելել անբարեխիղճ տնտեսավարողների կողմից սպառողների շահերը վնասելու փորձերը,
- շարունակել կրճատել պետության այնպիսի գործառույթները, որոնք կարող են վնասել ազատ շուկայական մրցակցային հարաբերությունների բնականոն զարգացմանը:

3.3.4. Արտակարգ իրավիճակների կանխարգելումը

Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառում կառավարության ծրագրերը նպատակաուղղված են լինելու աղետներից ու հնարավոր պատերազմների հետևանքներից մարդու կյանքին, առողջությանը և ունեցվածքին հասցվող վնասի նվազեցմանն ու բացառմանը: Կառավարությունը, գիտակցելով, որ հանրապետության կայուն զարգացումը, աղքատության նվազեցումն ու մյուս առաջնահերթությունների իրականացումն անխուսափելիորեն պետք է կատարվի աղետների ռիսկի կառավարման համատեքստում, նախատեսում է՝

- ուժեղ և կայուն ինստիտուցիոնալ ազգային բազայի հիման վրա նվազեցնել տարերային և տեխնածին ռիսկերը,
- իրականացնել ռիսկերի բազմակողմանի բացահայտում և գնահատում, զարգացնել աղետների վաղ ահազանգման համակարգը,

- նվազեցնել ռիսկերի բաղադրիչները և գործոնները, մշակել և իրականացնել գիտատեխնիկական ու նպատակային ծրագրեր,
- զարգացնել նորաստեղծ ճգնաժամային կառավարման կենտրոնի հնարավորությունները և ապահովել ժամանակակից մարտահրավերներին արձագանքելու պատրաստականությունը,
- զարգացնել ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի հնարավորությունները՝ դարձնելով այն արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության մասնագետների պատրաստման ու վերապատրաստման տարածաշրջանային և մերձավորարևելյան կենտրոն,
- ապահովել 911 ծառայության կայացումը՝ այն հաշվով, որպեսզի մարդը օգնության համար դիմի և ստանա միջազգային չափանիշներին համահունչ բազմակողմանի աջակցություն,
- կատարելագործել և զարգացնել պետական փրկարարական համակարգը՝ այն աստիճանաբար համապատասխանեցնելով ընդունված ժամանակակից պահանջներին, զուգահեռաբար պետական փրկարարական կառույցի շուրջ ձևավորելով հասարակական և կամավորական փրկարարական ուժեր,
- կատարելագործել և զարգացնել պետական նյութական պահուստի համակարգը,
- շենքերի, շինությունների նախագծման, բնակավայրերի տարաբնակեցման և զարգացման ծրագրերում հաշվի առնել ինչպես դրանց հնարավոր անվտանգ վայրի ընտրությունը, այնպես էլ սեյսմիկ անվտանգությունը:

3.3.5. Պաշտպանությունը, հասարակական կարգը, անվտանգությունը և արդարադատությունը

Պաշտպանության, հասարակական կարգի պահպանման, անվտանգության և արդարադատության ոլորտներում կառավարության ծրագրերի կիզակետը լինելու է հասարակության յուրաքանչյուր անդամի պաշտպանվածության մակարդակի բարձրացումը: Մեր քաղաքացիները պետք է զգան, որ իրենք ապրում են պաշտպանված, ապահով և անվտանգ երկրում, ինչը մարդկային կապիտալի զարգացման կարևորագույն պայ-

ման է: Կառավարության գործողություններն առաջին հերթին ուղղված են լինելու ազգային անվտանգությանն սպառնացող առկա և հավանական ռազմաքաղաքական սպառնալիքների բացահայտմանը, մեր ուժեղ և կազմակերպված բանակի մարտունակության շարունակական բարձրացմանն ու սպառազինմանը: Այս առումով կառավարությունը նախատեսում է՝

- պաշտպանական ներուժը համապատասխանեցնել արհեստավարժության, կարգապահության, թափանցիկության և վերահսկելիության արդիական չափանիշներին և ունենալ մրցունակ բանակ,
- հասարակության մեջ ամրապնդել զինվորական պարտադիր ծառայության ինստիտուտի նկատմամբ վստահությունը՝ սոցիալական և կրթական պայմանների շարունակական բարելավման միջոցով,
- զորացրվողներին ապահովել աշխատանքով և արտոնյալ ուսման հնարավորությամբ:

Միաժամանակ, ոստիկանության, դատախազության և այլ իրավապահ մարմինների գործունեությունը պետք է նպատակաուղղվի հասարակությունում սոցիալական խաղաղության և համերաշխության հաստատմանը, իսկ նրանց գործելաոճը պետք է միտված լինի առավելապես բանակցային և իրավիճակի սրումը կանխարգելող այլ եղանակներով սոցիալական հակամարտությունների առաջացման կանխմանը կամ դրանց խաղաղ լուծմանը, անձ-իրավապահ մարմին հարաբերությունում անձանց իրավունքների և ազատությունների լիարժեք ապահովմանը: Կառավարությունն էապես խստացնելու է իրավապահ մարմինների ծառայողների կողմից անձի իրավունքների խախտման համար պատասխանատվությունը և ապահովելու դրա անխուսափելիության գործնական երաշխիքները:

Ոստիկանության, դատախազության և դատարանների գործունեությունը կոչված է լինելու ապահովել յուրաքանչյուր անձի իրավունքների և շահերի համակողմանի պաշտպանությունը, երաշխավորել հասարակության յուրաքանչյուր անդամի համար արդարադատության մատչելիությունը և յուրաքանչյուր վեճի արդարացի լուծումը, որի համար դատա-

կան իշխանությունը պետք է լինի արդյունավետ և հանրությանը հաշվետու: Այդ նպատակով ընդունվելու է դատաիրավական բարեփոխման նոր հայեցակարգ: Այս բնագավառում կառավարությունը նախատեսում է՝

- առավել խիստ պահանջներ սահմանել դատավորների և դատախազների մասնագիտական պատրաստման և դրա կազմակերպման նկատմամբ,
- ստեղծել դատարանների ներքին անկախության գործուն երաշխիքներ: Բարձրացնել դատավորների ինքնակառավարման մարմինների գործունեության արդյունավետությունը,
- դատական և դատախազության համակարգերում կադրերի պատրաստման նպատակով գործարկել արդարադատության ակադեմիան,
- ապահովել դատական իշխանության և դատախազության կադրերի համալրման օբյեկտիվ ու թափանցիկ ընթացակարգեր՝ անձի ոչ միայն մասնագիտական գիտելիքների գնահատման, այլև որպես դատավոր կամ դատախազ գործելու ունակության և բարոյական հատկանիշների հաշվառման հիման վրա,
- խստացնել դատավորների վարքագծի կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողությունը և բարձրացնել նրանց կարգապահական պատասխանատվության ընթացակարգերի արդյունավետությունն ու թափանցիկությունը,
- ներդնել դատավորների գնահատման ու առաջխաղացման օբյեկտիվ չափանիշներ և ընթացակարգեր,
- կրճատել դատարանների կողմից գործերի քննության ժամկետները,
- խթանել արտադատական կարգով վեճերի լուծման այլընտրանքային ընթացակարգերը:

3.4. ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության կառավարության արտաքին քաղաքականությունը նպատակ է ունենալու պետական շահերի պաշտպանությունը, երկրի արտաքին անվտանգության ապահովումը, տնտեսական զարգացման համար անհրաժեշտ արտաքին բարենպաստ պայմանների ու երաշխիքների ստեղծումը, տարածաշրջանային և միջազգային գործընթացներում Հայաստանի Հանրապետության դերի և հեղինակության բարձրացումը, տարածաշրջանային կայունությանը, անվտանգությանը և զարգացմանը նպաստելը:

Կառավարությունը բազմապատկելու է Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նկատմամբ ցանկացած տեսակի ագրեսիայի դրսևորման վտանգի կանխարգելմանն ուղղված դիվանագիտական ջանքերը: Շարունակվելու են աշխատանքները կարգավորման շուրջ ընթացող բանակցություններում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը՝ որպես լիիրավ կողմ ներգրավելու ուղղությամբ: Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հիմք է հանդիսանալու Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի միջազգային ճանաչումը:

Հայաստանի Հանրապետության, Արցախի և սփյուռքի ջանքերն ուղղվելու են միջազգային կազմակերպություններում խնդրի ուժային լուծումը բացառող և կանխարգելող որոշումների ընդունմանը: Լեռնային Ղարաբաղի սոցիալ-տնտեսական առաջանցիկ զարգացման տեմպի պահպանումը մնալու է կարևորագույն մոտեցում:

Կառավարությունն առավել ամրապնդելու և խորացնելու է դաշնակցային ու ռազմավարական հարաբերությունները Ռուսաստանի Դաշնության հետ, բարեկամական գործընկերության շարունակական զարգացում է ապահովելու Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ, ընդլայնելու է հարաբերությունները եվրոպական երկրների հետ: Շարունակվելու է եվրոպական ընտանիքի հետ մերձեցման քաղաքականությունը, ամրապնդվելու են Վրաստանի և Իրանի հետ պատմականորեն ձևավորված բարեկամական հարաբերությունները, հետևողականորեն զարգացվելու է փոխ-

գործակցությունն Անկախ պետությունների համագործակցության անդամ երկրների հետ, խորացվելու են հարաբերությունները Չինաստանի, Հնդկաստանի, Ճապոնիայի, Մերձավոր Արևելքի, Ասիայի, Հյուսիսային և Հարավային Ամերիկայի պետությունների հետ:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը հետամուտ է իր ռազմաքաղաքական անվտանգության կարևոր բաղադրիչ հանդիսացող Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունում (ՀԱՊԿ) ակտիվ ներգրավվածությանը:

Կառավարությունը շարունակելու է ջանքերը աշխարհում ցեղասպանության կանխարգելման ու դատապարտման, ինչպես նաև դրա հետևանքների վերացմանն առնչվող խնդիրները միջազգային հանրության օրակարգում պահելու համար: Քաղաքակիրթ մարդկությունն այս չարիքի դեմ պետք է դրսևորի մեկ միասնական ձակատով արդյունավետ գործելու ունակություն:

Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի նախաշեմին համախմբվելու են հայության ջանքերը Հայոց ցեղասպանության՝ որպես մարդկության դեմ գործած ոճրի միջազգային ճանաչման, ապագայում ցեղասպանության կանխարգելման, ուրացման բացառման, դատապարտման գործում:

Կառավարությունը շարունակելու է ջանքեր գործադրել Հայաստանի Հանրապետության երկու հարևանների կողմից շրջափակումը վերացնելու, դրա բացասական հետևանքները հաղթահարելու ուղղությամբ:

Կառավարությունը հետևողականորեն շարունակելու է ակտիվացնել իր մասնակցությունը միջազգային կազմակերպություններում:

3.5. ՍՓՅՈՒՌՔԸ

Կառավարությունը կարևորում է Հայաստան-սփյուռք գործակցության զարգացումը, հայության բոլոր հատվածների միասնականության ապահովումը՝ այն նպատակաուղղելով հայոց պետության հզորացմանն ու առաջընթացին, հայապահպանությանը և հայ ինքնության ամրապնդմանը:

Օգտագործելով երկքաղաքացիության ինստիտուտը և հայրենադարձության պետական ծրագիրը՝ կառավարությունն ստեղծելու է Հայաստանի տնտեսության մեջ սփյուռքահայերի ներգրավվածության ավելացման և ներդրումների խրախուսման նպաստավոր միջավայր:

Կմշակվեն հայրենադարձության գործընթացի իրավական հիմքերը, կներդրվեն գործուն ու արդյունավետ կառուցակարգեր՝ հայրենիք վերադարձող սփյուռքահայերի ինտեգրումը հասարակության մեջ արագացնելու համար:

Կառավարությունն աջակցելու է սփյուռքի համայնքների միավորմանն ու համախմբմանը, համայնքային ինքնակառավարման մարմինների հզորացմանը, միջհամայնքային հորիզոնական կապերի հաստատմանը և Հայաստանի Հանրապետության հետ այդ կառույցների կապերի ամրապնդմանը:

Սփյուռքում հայապահպանությանն աջակցելու, երիտասարդության շրջանում մայրենի լեզվի ուսուցման, կրթական այլ ծրագրերի ընդլայնման նպատակով կառավարությունը շարունակելու է՝

- սփյուռքի հայկական դպրոցների համար ուսումնական ծրագրերի և ձեռնարկների մշակումը, դասագրքերով ապահովումը,
- Հայաստանում, սփյուռքում սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստումը,
- հանրային հեռուստատեսության ծրագրերի արբանյակային հեռարձակման ընդլայնումը, այդ ծրագրերի որակի ու բովանդակության բարելավումը:

Կառավարությունը շարունակելու է վիրահայության, այդ թվում՝ Ջավախքի հայկական համայնքների հայապահպանությանը, մայրենի լեզվի պահպանմանն աջակցության ծրագրերի իրականացումը:

Հետևողական աշխատանք կիրականացվի հայ ժողովրդի շահերի պաշտպանության, հայկական արժեքների քարոզման, հայոց պատմության կեղծարարների դեմ հակազդեցության համար, ինչպես նաև համահայկական միասնական տեղեկատվական դաշտի ստեղծման ուղղությամբ:

Կառավարությունն իր կարևորագույն խնդիրն է համարում միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի շրջանակում նպաստելու այլ պետություններում գտնվող հայկական պատմամշակութային ժառանգության պահպանությունը:

Սփյուռքը համարելով Հայաստանի համար համաշխարհային ինտեգրման հուսալի և արդյունավետ կամուրջ՝ կստեղծվեն հայրենիքի ներքին կյանքին սփյուռքի ներուժի ներգրավման և նրանց աջակցությամբ միջազգային կառույցների հետ ներպետական կառույցների աշխատանքի բարելավման կայուն և հստակ մեխանիզմներ:

3.6. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՌԻՍԿԵՐԸ

Համաշխարհային տնտեսությունն այժմ թևակոխել է հետճգնաժամային վերականգնման բավական բարդ և անկայուն փուլ, որը բնութագրվում է և համաշխարհային տնտեսական աճի տեմպի նվազման էական ռիսկով, առկա միտումների պահպանման խոցելիությամբ և տնտեսության կառավարման ու գոյություն ունեցող կարգավորման մոդելների կիրառելիության անորոշությամբ: Ինչպես ցույց տվեց համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը, համաշխարհային տնտեսության զգալի վատթարացումը չի կարող անմասն թողել ցանկացած, հատկապես բաց տնտեսություն ունեցող երկրի: Այս առումով Հայաստանում ևս արտաքին տնտեսական միջավայրի վատթարացումը կարող է որոշակի ճշգրտում մտցնել կառավարության ծրագրերի իրագործման համար անհրաժեշտ ռեսուրսներում և գործընթացներում՝ արդյունքում վտանգելով թիրախային ցուցանիշների հասանելիությունը:

Ճգնաժամի հաղթահարման դանդաղ ընթացքն ու լուծումների բազմազանությունն ակնհայտորեն ցույց տվեցին որ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո կառավարման թե՛ տեսության, թե՛ պրակտիկայի առումով աշխարհը թևակոխել է անորոշության ամենախոշոր փուլը: Թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական առումով միանման նոր լուծումներ չեն առաջացել, և յուրաքանչյուր երկիր ինքնուրույն է որոշում իր առանձնահատկություններին յուրահատուկ լուծումների փաթեթը:

Համաձայն միջազգային հեղինակավոր կազմակերպությունների գնահատականների՝ այս պահին համաշխարհային տնտեսությունը շարունակում է զարգանալ վերը նկարագրված էական անորոշության ներքո: Ֆինանսական և հարկաբյուջետային հիմնախնդիրների տարածումը Եվրոպայի ավելի մեծ թվով երկրներում միջնաժամկետ տնտեսական զարգացման հեռանկարի առումով առաջացրել է էական ռիսկեր ինչպես մյուս զարգացած, այնպես էլ զարգացող երկրներում:

Վերլուծաբանները նշում են, որ Եվրագոտում պարտքային հիմնախնդիր ունեցող երկրների մարտահրավերին ավելացել է ևս մեկը՝ Եվրոպական

բանկերի վճարունակության խնդիրը: Միաժամանակ, Ամերիկայի Միացյալ Նահանգներում դեռևս արդիական են մնում միջնաժամկետ ֆիսկալ կարգավորման խնդիրները, իսկ նախկինում դինամիկ զարգացող ասիական երկրները բացահայտում են միջնաժամկետում աճի բարձր տեմպերի կառուցվածքային սահմանափակումները: Մասնագետների կողմից համաշխարհային տնտեսության և հատկապես Եվրամիության աճի կանխատեսումները շարունակում են ճշգրտվել դեպի ներքև կամ տատանվել, նաև էապես ազդվելով շուկաների և ներդրողների վատատեսական սպասումներից: Ըստ տարածված սպասումների՝ կառուցվածքային խնդիրների լուծման ձգձգման հետևանքները համաշխարհային տնտեսության վրա կարող են ունենալ ոչ միայն միջնաժամկետ, այլև երկարաժամկետ բնույթ: Ընդ որում, եթե պարտքի խնդիր ունեցող երկրներից մեկը դեֆոլտ արձանագրի, ապա դա կարող է կրել շղթայական բնույթ, ինչի հետևանքով թե՛ արժեթղթերի և թե՛ հումքային շուկաներն ավելի կտրուկ անկում կարձանագրեն: Համաշխարհային տնտեսական աճի անկումը Հայաստանի տնտեսության վրա կարող է ազդել հետևյալ ուղիներով՝

- գործընկեր երկրների պահանջարկի շարունակական անկմանը համապատասխան Հայաստանի արտահանման աճի տեմպի դանդաղումը կզսպի ՀՆԱ-ի աճի տեմպը,
- միջնաժամկետում մետաղների գների շարունակական անկման դեպքում արտահանման թուլացումը կբերի ՀՆԱ-ի աճի տեմպի դանդաղման,
- կապիտալի դեպի ԱՄՆ-ի փախուստի և ԱՄՆ-ի դոլարի արժևորման արդյունքում նավթի ու գազի գների նվազման շարունակման, իսկ միջնաժամկետում ցածր մակարդակի վրա մնալու դեպքում, Ռուսաստանի տնտեսության զարգացման տեմպը կարող է դանդաղել: Արդյունքում դեպի Հայաստան ներհոսող կապիտալ ներդրումները, գործոնային եկամուտը և տրանսֆերտները կկրճատվեն՝ հանգեցնելով նաև ՀՆԱ-ի աճի ծրագրում ներկայացված սցենարից ավելի ցածր մակարդակի ձևավորմանը:

Հայաստանը, լինելով փոքր և բաց տնտեսություն, արագ է արձագանքում արտաքին աշխարհի տնտեսական զարգացումներին: Վերը նշված ռիսկերի նյութականացման դեպքում էապես կնվազեն արտաքին միջա-

վայրից ռեսուրսների ներգրավման հնարավորությունները: Ընդ որում, ՀՆԱ-ի կանխատեսվածից ցածր մակարդակի ձևավորման չափը կախված կլինի ինչպես այն բանից, թե վերը նշված ռիսկերից որոնք կիրականանան, այնպես էլ դրանց դրսևորման չափից: Ուստի կառավարությունը ջանքերը կկենտրոնացնի Հայաստանի տնտեսության կայունության պահպանման և ներքին ռեսուրսների օպտիմալ օգտագործման միջոցով տնտեսական զարգացման ապահովման վրա: Այդ դեպքում, հավանական է, որ առաջարկվող նոր լուծումները կարող են տարբերվել թե՛ արդեն իսկ գոյություն ունեցող ինստիտուցիոնալ լուծումներից, թե՛ այլ երկրներում համանման լուծումներից, և բխել Հայաստանի տվյալ ոլորտում այդ պահին առկա յուրահատկություններից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ....2

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ....3

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

ՆԱԽԱԲԱՆ....18

1. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ....20

2. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ....23

3. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ....25

3.1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ....25

3.1.1. Գործարար և ներդրումային միջավայրը....26

3.1.2. Ֆինանսական միջնորդությունը....27

3.1.3. Բյուջետային համակարգը....29

3.1.4. Տնտեսության հիմնական ճյուղերը....30

3.1.4.1. Արդյունաբերությունը....30

3.1.4.2. Գյուղատնտեսությունը և գյուղը....32

3.1.4.3. Քաղաքաշինությունը....34

3.1.4.4. ՓՄՁ-ին պետական աջակցությունը....35

3.1.4.5. Ջրոսաշրջությունը....36

3.1.5. Միջազգային ինտեգրացիան և արտաքին տնտեսական քաղաքականությունը....37

3.1.6. Տարածքային համաչափ զարգացումը....38
3.1.7. Ենթակառուցվածքները....38
3.1.7.1. Էներգետիկան....39
3.1.7.2. Ջրամատակարարումը....39
3.1.7.3. Տրանսպորտային ենթակառուցվածքները....40
3.1.7.4. Հեռահաղորդակցությունը....41
3.2. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ....42
3.2.1. Սոցիալական քաղաքականությունը....42
3.2.2. Առողջապահությունը....43
3.2.3. Կրթությունը և գիտությունը....44
3.2.4. Բնապահպանությունը....45
3.2.5. Մշակույթը....46
3.2.6. Ժողովրդագրությունը, երիտասարդությունը և սպորտը....49
3.2.6.1. Ժողովրդագրությունը....49
3.2.6.2. Երիտասարդությունը....50
3.2.6.3. Սպորտը....50
3.3. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ....51
3.3.1. Պետական կառավարումը և տեղական ինքնակառավարումը....51
3.3.1.1. Կառավարման համակարգի բարեփոխումը և կոռուպցիայի դեմ պայքարը....51
3.3.1.2. Տեղական ինքնակառավարումը....53
3.3.2. Հարկային և մաքսային համակարգերը....54
3.3.3. Մրցակցության պաշտպանության համակարգը....55
3.3.4. Արտակարգ իրավիճակների կանխարգելումը....56
3.3.5. Պաշտպանությունը, անվտանգությունը, հասարակական կարգը և արդարադատությունը....57
3.4. ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ....60
3.5. ՍՓՅՈՒՌՔԸ....62
3.6. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՌԻՍԿԵՐԸ....64